

Պետական Գրասենեակը Կը Դատապարտէ Թուրքիոյ Նախագահի Քիկնապահներու Արարքը

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Էրտողանի Ուաշինգթոնի այցելութիւնը յատկանշուեցաւ մեծ սկանդալով մը:

Արդարեւ՝ Մայիս 16-ին, Սպիտակ Տան մէջ նախագահ Տոնալտ Թրամփի կողմէ սիրալիւր ընդունելութեան արժանանալէ ետք, էրտողանի թիկնապահները յարձակած են թրքական դեսպանատան առջև բողոքի խողովոյ ցոյցի մասնակիցներուն վրայ:

Ոստիկաններու կողմէ հաստատուած զիծը անցնելով, թուրք թիկնապահները սկսած են բռնութիւն գործադրել ցուցարարներուն նկատմամբ, արիւնլուաչ վիճակի մասնելով առնուազն ինը ցուցարարներու:

Այս արարքը խիստ դատապարտուած արժանացաւ Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակի եւ Ուաշինգթոնի քաղաքապետութեան կողմէ, որոնք անընդունելի նկատեցին Ամերիկացի քաղաքացիներու դէմ նման վերաբերմունքը, էրտողանի թիկնապահներուն կողմէ:

Երեւոյտական ձոն Մըֆէյն յայտարարեց որ, Ամերիկայի մէջ հարցերը նման միջոցներով չեն լուծուիր, իսկ այլ գոնկէսականներ պահանջեցին, որ էրտողան ներողութիւն խնդրէ, իր թիկնապահներու արարքին համար:

Ըստ ամերիկեան մամուլին վիրաւորները եղած են քուրտ ցուցարարներ:

Հայաստանի Պետական Պարտքը Կը Շարունակէ Աճիլ

Համաշխարհային Պանքի (ՀՊ) հրապարակած զեկոյցին համաձայն, յառաջիկայ տարիներուն Հայաստանը զգալիօրէն պիտի աւելցնէ իր պետական պարտքը: Եթէ 2014 թուականին Հայաստանի պետական պարտքը կը կազմէր երկրի տնտեսութեան 43.7 տոկոսը, ապա 2019-ին, աճելով մօտ 15 տոկոսային կէտով, այ կը կազմէ 58.2 տոկոս:

2008-2016 թուականներու ընթացքին Հայաստանի պետական պարտքը աճած է աւելի քան 3 անգամ՝ հասնելով 6 միլիարտ տոլարի:

Համաշխարհային պանքի նոյն զեկոյցին մէջ Հայաստանի վերաբերեալ կայ ոչ-միջախարակեան եւս մէկ լուր. անցած տարի աղքատու-

Շար.ը էջ 5

Ատրպէյճանի Կողմէ Հրթիռային Հարուածներ Ղարաբաղի Ուղղութեամբ

Ատրպէյճանի զինուած ուժերը երեք հրթիռային հարուած հասցուցած են Ղարաբաղի ուղղութեամբ, վնասուած է երկու միակողմէր, որոնցմէ մէկը «ՕՍԱ» տեսակի զինթիթակային համակարգ է, միւսը՝ ոչ մարտական: Այս մասին «Ազատութեան» տեղեկացուցած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը: Հարուածներէն միայն մէկը հասած է նպատակին:

«Հրթիռով փորձել են խոցել զինթիթակային, տուեալ դէպքում հակաօդային միջոց, բայց կոնկրետ այդ միջոցն այդքան չի վնասուել: Այլուէլ է ուրիշ մեքենայ, որ ոչ մի կապ չունի զինթիթակային «ՕՍԱ» համակարգի հետ, եւ մարդկային կորուստներ էլ չեն եղել: Այդ մասին յայտնել է նաեւ

Պաշտպանութեան բանակը», - ըսած է Յովհաննիսեանը:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարած է, որ մէկ «ՕՍԱ» համալիր ոչնչացուցած է, մէկ լիցքաւորող մեքենայ եւ անոնք սպասարկող անձնակազմը:

Հրթիռային հարուածներու հետեւանքով հայկական կողմը վիրաւորներ նոյախս չունի, վստահեցուցած է Յովհաննիսեանը:

Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը տեղեկացուցած է, որ Ատրպէյճանական կողմը կիրառած է «Սփայք» տեսակի իսրայէլեան հեռակաչ կառավարող հրթիռներ: Համացանցային բաց աղբիւրներու համաձայն, որ այդ հրթիռի ար-

Շար.ը էջ 4

Տեղական Դիտորդներու Կարծիքով, Քուէարկութեան Արդիւնքները Չեն Արտացոյցը Երեւանցիներու Կամքը



«Երկիր Ծիրանի» կուսակցութեան քաղաքապետի թեկնածու Զարուհի Փոսթանճեանի ոստիկաններու կողմէ բռնութեան կ'ենթարկուի երբ ան կը փորձէր կանխել ԳԳԿ շտապէն Գերս ընտրակաշառքի գործողութիւնները

Մայիս 14-ին տեղի ունցած Երեւանի քաղաքապետական քուէարկութեան ընթացքին մեծամասնութիւնը՝ 71, 25 տոկոսը քուէարկած է յօգուտ իշխող Հանրապետականի, որու քաղաքապետի թեկնածուն 2011 թուականին Երեւանի քաղաքապետի պաշտօնը զբաղեցնող Տարօն Մարգարեանն է: Ընտրողներու 21 տոկոսը ձայն տուած է «ԵԼք» դաշինքին, որու քաղաքապետի թեկնածուն Նիկոլ Փաշինեանն է: 7,75 տոկոսն ալ քուէարկած է Զարուհի Փոսթանճեանի՝ վերջերս հիմնադրած «Երկիր Ծիրանի» կուսակցութեան օգտին:

Եթէ նախնական արդիւնքները լուրջ փոփոխութիւններու չեն թարկուիր, ապա մայրաքաղաքի 65 հոգինոց աւագանիին մէջ Հանրապետականը կ'ունենայ 46, «ԵԼք»-ը 14, իսկ «Երկիր Ծիրանին» 5

մանդատ:

Իշխող Հանրապետականի քաղաքապետի թեկնածու Տարօն Մարգարեանի ստացած 71 տոկոս ձայնը, մայրաքաղաքի աւագանիի ընտրութիւններու դիտարկած տեղեկան դիտորդական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու կարծիքով չ'արտացոյցը երեւանցիներու կամքը:

Ընտրողներու ուղղորդում, կեղծ դիտորդներ տեղամասերուն մէջ, ընտրակաշառքի դէպքեր, ուրիշ փոխարէն քուէարկութիւնը ատնք այն հիմնական ընտրախախտումներն են, որոնք արձանագրած են անկախ դիտորդական կազմակերպութիւնները:

Այս ամէնը հաշուի առնելով տեղական դիտորդները յայտարարած են՝ իշխող հանրապետականի

Շար.ը էջ 5

Հայաստանի ԱԳ Նախարարութիւնը Կը Հակադարձէ Մամետարովին

«Մոսկովեան հանդիպումէն ետք մօտս այնպիսի տպաւորութիւն ստեղծուած է, որ տարածքներէն հայկական գործերը դուրս հանելուն դիմաց խողովոյ ճան հաստատուածը հնարաւոր է, տարածքներ՝ խողովոյ ճան դիմաց տրամաբանութեամբ»: Նման յայտարարութեամբ հանդէս եկած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար էլմար Մամետարով՝ աւելցնելով, թէ հնարաւոր կը համարէ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներու նոր հանդիպումը:

Մամետարով նաեւ ըսած է, թէ վերջին 12 տարիներուն բանակցութիւններու տրամաբանութիւնը այդ է, ընդգծելով՝ բանակցութիւններ չեն ըլլար միայն բանակցութիւններու համար: «Բոլորին պարզ է, որ Հայաստան պէտք է դուրս հանէ իր գործերը Ատրպէյճանի տարածքներէն», - ըսած է ան:

Հայաստանի ԱԳՆ խօսնակ Տիգրան Բալայեան, հակադարձեով Մամետարովին այս յայտարարութեան ըսաւ. «Ապրիլ 28-ին Մոսկովեան մէջ Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման բովանդակութիւնը արտացոյցուած է Հայաստանի եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւններուն կողմէ հրապարակուած հաղորդագրութիւններուն մէջ: Ի միջի այլոց, կը նախատեսուէր, որ համանման բովանդակութեան հաղորդագրութիւն մը պէտք է հրապարակէր նաեւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը, ինչ որ տեղի չ'ունեցաւ, եւ անոր տրամաբանական շարունակութիւնն էր, որ ատրպէյճանական կողմը հանդէս կու գայ այլեւայլ մեկնաբանութիւններով»:

Մոսկովեան մէջ Ապրիլ 28-ին Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու ղեկավարներուն հանդիպումը տեղի ունեցած էր ռուսական կողմի նախաձեռնութեամբ:

ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահները հերթական տարածաշրջանային այցը պէտք է կատարեն յառաջիկայ Յունիսին կամ Յուլիսին: Այդ մասին յայտարարած է Մինսքի խումբի ամերիկացի համանախագահ Ռիչըրտ Հոկլանտ, ընդգծելով՝ «կողմերը պէտք է ոչ միայն վերահաստատեն իրենց հաւատարմութիւնը հրադարարի պահպանման, այլեւ նշեն՝ ինչպէս իրենք կեանքի պիտի կոչեն վստահութեան ամրապնդման խիստ անհրաժեշտ միջոցառումները, որոնց շուրջ համաձայնութիւն ձեռք բերուած էր անցեալ տարի Վիեննայի, ապա՝ Ս. Փեթերբուրգի մէջ»:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Յանուն 15 Մլն. Եւրոյի Կոռուպցիոն Բուրգի Գլխին Կանգնածները Կը Պատժուե՞ն.

ԽՍՐԱՎԱՐԱԿԱՆ

Իշխանութիւնները շարունակում են ձեռնարկել, թէ պայքարում են կոռուպցիայի դէմ, քայլեր անում այդ ուղղութեամբ: Օրինակ՝ կառավարութիւնն իր երեկուայ նիստում հաւանութեան է արժանացրել «Ազդարարման համակարգի մասին» եւ յարակից մի շարք օրէնքներում փոփոխութիւնների նախագծերի փաթեթը: Ըստ այդմ, նախատեսուած է ստեղծել միասնական էլեկտրոնային հարթակ, որը հնարաւորութիւն կ'ընձեռի քաղաքացիներին կոռուպցիոն բնույթի դէպքի մասին իր ունեցած տեղեկատուութիւնն իրաւասու պետական մարմինն ազդարարել անանուն կերպով:

«Ազդարարների պաշտպանութեանն ուղղուած գործուն մեխանիզմների ներդրումը կը նպաստի հանրութեան մէջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձեւաւորմանը, այդ թւում՝ կոռուպցիայի դէմ պայքարում ազդարարների ներգրաւման եղանակով: Միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծումը հնարաւորութիւն կ'ընձեռի ազդարարներին ներկայացնել անանուն հաղորդումներ՝ պահպանելով իրենց անձնական տուեալների գաղտնիութիւնը: Բացի այդ՝ քննարկուող ինստիտուտի ներդրումը կը բարձրանայ կոռուպցիոն դէպքեր բացայայտող մարմինների գործունէութեան արդիւնաւետութիւնը»,- ասուած է կառավարութեան հաղորդագրութեան մէջ:

Ժամանակը ցոյց կը տայ, թէ այս համակարգի ներդրումը որքանով արդիւնաւետ կը լինի կոռուպցիայի դէմ պայքարի հարցում: Սակայն միայն այն փաստը, որ կոռուպցիայի դէմ պայքարելու

մասին խօսում է քաղաքական կոռուպցիայի արդիւնքում ձեւաւորուած իշխանութիւնը (հազիւ թէ որեւէ մէկը մոռացած լինի Աժ վերջին ընտրութիւններում համատարած բաժանուած ընտրակաշառքը) անվստահութեան ու թեւաւորակութեան տեղիք է տալիս: Բացի այդ՝ այս ընթացքում բազմաթիւ կոռուպցիոն սկանդալներ են բացայայտուել, ինչպէս լրատուամիջոցների, այնպէս էլ տարբեր անհատների կողմից, ընդ որում, շատ հասցեական, բայց այդ ամէնը հետեւանք չի ունեցել: Լաւագոյն դէպքում պատասխանատուութեան են ենթարկուել մանր ու միջին օղակի պաշտօնեաները, իսկ «խոշոր ձկները» շարունակել են անարգել պաշտօնավարումը: Եւ, ընդհանրապէս, Հայաստանում այս տարիներին ձեւաւորուած կոռուպցիոն բուրգի կազմաքանդումը կտրուկ քայլեր է պահանջում, ոչ թէ քայլերի իմիտացիա: Այնպէս որ, որեւէ երաշխիք չկայ նաեւ այս դէպքում. հազիւ թէ իշխանութիւնները լրջօրէն հետամուտ լինեն անանուն հաղորդումներին ու պատասխանատուութեան ենթարկեն կոռուպցիոն բուրգի գլխին կանգնածներին: Մի փաստ էլ. ՀՀ-ում ԵՄ դեսպան Պիոտր Սվիտալսկին մէկ անգամ չէ, որ յայտարարել է՝ ԵՄ-ն պատրաստ է Հայաստանին կոռուպցիայի դէմ պայքարի շրջանակներում 15 մլն եւրօ տրամադրել, սակայն մինչ այդ իշխանութիւնները պէտք է ցոյց տան, որ պատրաստ են իրապէս պայքարել այդ երեւոյթի դէմ, պէտք է կոնկրետ արդիւնքներ գրանցեն: Ու հիմա օրէնսդրական այս նոր նախաձեռնութիւնն աւելի շատ ԵՄ-ից 15 մլն եւրօ պոկելու նպատակ է հետապնդում, քան իրական պայքար կոռուպցիայի դէմ: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Ինչ Շահեցին Եւ Ինչ Կորցրինք

ԱՐՄԻՆԵ ՕՅԱՆԵԱՆ

Զգիտեմ ով ինչ հետեւութիւն է արել 2017-ի ընտրական մարաթոնից, բայց ինձ մօտ մի անորոշ ու տհաճ զգացում է մնացել, որ Հայաստանում աստիճանաբար ձեւաւորուած է պիտոնութեան եւ անամօթութեան կայուն մթնոլորտ: Երբ բարձրաստիճան չհիմովնիկներն ու ժողովրդի «ընտրակներն» ուղիղ նայելով մեր աչքերի մէջ անամօթաբար ստում են ու սողայական մրցակցութեան մէջ մտնում միմեանց հետ՝ ձայներ բերելու, հանրութեանն աւելի ձգմելու, իրենց ուժն աւելորդ անգամ ցուցադրելու հարցում:

Ես ոչ մի կերպ չեմ հասկանում հանրապետականների անպատմելի ջանքերն ու համընդհանուր մոբիլիզացիա յայտարարելու եռանդն ընտրութիւնների փուլում: Մի՞թէ այդքան մեծ մտավախութիւն ունեն, որ չեն անցնելու: Եւ արդեօք արժէ՞ դիմել այդքան ապօրինութիւնների եւ անամօթութիւնների մի 10-15 տոկոս աւելի շատ ձայն հաւաքելու համար: Ասենք, Մալաթիայից յայտնի օլիգարխը եթէ 42 հազար ձայն չունենար «գրպանում», այլ 32 հազար, կամ Արարատի օլիգարխը 45 հազարի փոխարէն՝ 35 հազար, դրանից ի՞նչ կը փոխուէր իրենց, իրենց կու-

սակցութեան, մեր երկրի կեանքում: Ասենք, եթէ Երեւանի աւագանու ընտրութիւններին «ցուցակներ» չկազմէին, թաղային հեղինակութիւններին չմոբիլիզացնէին ու արդիւնքում ոչ թէ 70, այլ 60 տոկոս տանէին, մի 5 մանդատ պակաս ունենալով, դրանից ո՞վ կը տուժէր: Իսկ որ կը շահէինք բոլորս՝ դրանում ոչ մի խօսք: Քանզի հանրութիւնը կը համոզուէր, որ մեզանում էլ է հնարաւոր ազնիւ ու արդար ընտրութիւններ անցկացնել: Կը հասկանար, որ իշխանութիւնը յարգում է իր քաղաքացուն եւ նրան չի «առնում», չի «ստորացնում»:

Ի վերջոյ, հանրութեան հոգեվիճակն ու վերաբերմունքը պակաս կարեւոր գործօն չեն, քան ընտրական կասկածելի յաղթանակն ու սեփական թիմակիցներին եւ կուսառաջնորդին ինչ-որ բան ապացուցելու մարմաջը: «ՀՐԱՊԱՐԱԿ»

Կարէն Կարապետեանին Հարուածելու Եւ Ամէն Օր

ՀԱՎՈՐ ԲԱՂԱԵԱՆ

«Հարազատներ ջան, կարելի է՞ ամէն օր այդ հարցի շուրջ խօսել», նախօրէին Երեւանի քաղաքապետի ընտրութեան քուէարկութեանը լրագրողները հարցերին ի պատասխան ասել է վարչապետ Կարէն Կարապետեանը: Իսկ հարցը վերաբերել է 2018-ին նրա վարչապետութեան շարունակութեանը, դրա վերաբերեալ օրերս արած յայտարարութեանը, թէ արդեօք դա արտայայտում է նաեւ ՀՀ կարծիքը: Իսկ Կարէն Կարապետեանը Աւստրիայի հանրային ռատիոյի թղթակցին տուած հարցազրույցում ասել էր, որ պատրաստ է վարչապետ լինել նաեւ 2018-ից յետոյ եւ լինել պետութեան ղեկավար:

Կարէն Կարապետեանն ասել էր նաեւ, որ չի երազել լինել վարչապետ, չի ձգտել իշխանութեան, պարզապէս ուզում է փոփոխութիւն իրականացնել Հայաստանում:

Տողատակում Կարապետեանն ակնարկել էր, որ հակառակ կողմում «իշխանութեան ձգտում» է: Ո՞րն է հակառակ կողմը: Այստեղ որոշակի է այն, որ այդ կողմում Սերժ Սարգսեանն է, իսկ թէ ո՞ւմ դէմքով, դա պարզ չէ՝ ի՞նչ, թէ՞ վարչապետի իր համար վստահելի թեկնածուի: Բայց Սերժ Սարգսեանն այստեղ ունի ահռելի առաւելութիւն, քանի որ գերծ է պատասխանատուութիւնից, ի տարբերութիւն Կարէն Կարապետեանի:

Կարապետեանն առաջացրել է փոփոխութեան սպասում, Սերժ Սարգսեանին յաջողուել է նրան զցել այդ «ծողակը», իսկ ինքը քաշուել է մի կողմ եւ փորձում է լուծել 2018-ի հարցը:

Հետաքրքիր է, թէ արդեօք Սերժ Սարգսեանը Կարէն Կարապետեանի հետ վարչապետի հարց քննարկելիս տուել է 2018-ի հետ կապուած երաշխիքներ, որ թողնելու է իշխանութիւնը: Արդեօք Կարէն Կարապետեանը կարող էր միամիտ լինել՝ առանց այդ երաշխիքների անցումային փուլում վարչապետի պաշտօնին համաձայնելու համար, որը այլ բան չէ, քան քառութեան նոխագի պաշտօն: Աւելին, միայն միամիտ լինելու դէպքում էր հնարաւոր հաւատալ Սերժ Սարգսեանի անգամ 2018-ի երաշխիքներին: Հետեւաբար Կարապետեանը պէտք է որ պատկերացներ՝ առանց ներիշխանական կոշտ եւ յամառ պայքարի չի ստացուելու ոչինչ, Սերժ Սարգսեանը չի փոխանցելու իշխանութիւնը. կամ յանձնելու է, կամ՝ ոչ:

Միւս կողմից, կայ նաեւ խնդրի հակառակ դիտանկիւնը: Որեւէ իշխանութիւն, առաւել եւս այնպիսին, որի հիմքը Սամանդրութիւնը չէ, այլ կապիալի նախնական կուտակման վայրի գործընթացը, չի փոխանցուած հենց այնպէս, եւ այստեղ Սերժ Սարգսեանի բարի կամքի կամ խօսքի տէր

լինելու հանգամանքը չէ միայն: Կայ համակարգային անվտանգութեան խնդիր, կայ իշխանութեան կենսագործունէութեան բնականոնութեան խնդիր:

Այստեղ Կարէն Կարապետեանը կանգնած է իրապէս բարդ վիճակում՝ նա մի կողմից պէտք է հապէս փոխի համակարգը, միւս կողմից չի կարող անել այդ բանն առանց համակարգին անվտանգութեան նուազագոյն երաշխիքներ տալու եւ միաժամանակ կառավարելիութեան յուսալի մակարդակ ապահովելու:

Այստեղ է նրա գլխաւոր խնդիրը: Առաւել եւս, որ Սերժ Սարգսեանը հարուածելու է, եւ հարուածների թիրախ է լինելու հենց այդ խնդիրը, անընդհատ ցոյց տալով, որ Կարէն Կարապետեանը չի կարող կառավարել ու տիրապետել իրավիճակը: Նա մի կողմից հանրութեանն է փորձելու ցոյց տալ, որ Կարապետեանը չի կարող իրականացնել հանրօգուտ որեւէ սկզբունքային փոփոխութիւն, միւս կողմից համակարգին է ցոյց տալու, որ Կարապետեանը չի կարող ապահովել իշխանութեան անվտանգութիւնն ու սահուն տրանսֆորմացիան երկբեւեռ համակարգի:

2018-ի վերաբերեալ հարցերը Սարգսեանի գինանոցում են, դրանք հնչելու են անընդհատ, ամէն առիթով, ամէն տեղ, Կարապետեանը չի ազատուելու դրանցից: Հետեւաբար նա պէտք է լինի դրանց պատրաստ եւ ունենայ համոզիչ եւ վստահ պատասխաններ, որոնց ռազմավարական նպատակը պէտք է լինի Սերժ Սարգսեանին պատասխանատուութեան դաշտ բերելը: Կարապետեանն այլընտրանք չունի: «ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻՎԼ ՂԵՄՈՎՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ելք»-ը Կրցած է «Արձանագրել Դաշինքի Օգտին Տրուած Իւրաքանչիւր Քուէ»



«Ելք» դաշինքի ղեկավարներ Էտմոն Մարուքեան եւ Նիկոլ Փաշինեան ասուլիսի ժամանակ

Ընդդիմադիր «Ելք» դաշինքը յայտարարած է, որ Երեւանի աւազանի ընտրութիւններու արդիւնքները ընդհանուր առմամբ ձեւաւորուած են քաղաքացիներու քուէարկութեան արդիւնքով, եւ իրենք կրցած են արձանագրել «Ելք»-ի օգտին տրուած իւրաքանչիւր քուէ:

Մայիս 15-ին հրաւիրուած ասուլիսի ժամանակ դաշինքի ցուցակը գլխաւորող Նիկոլ Փաշինեանը յայտարարած է, որ բացի իրմէ, ցուցակի միւս անդամները պիտի վերցնեն աւազանի մանդատները: Նախնական տուեալներով «Ելք»-ը պիտի ունենայ 14 աւազանի անդամ:

«Մենք ձեւաւորել ենք համախոհների հսկայական բանակ: Էդ համախոհների հսկայական բանակը աւելանում է, եւ դա ակնյայտ էր ինչպէս ժամանակ 9 քաղաքական ուժեր Երեւանում ֆիքսել են 14 տոկոս, հիմա 3 քաղաքական ուժեր Երեւանում ֆիքսել են 21 տոկոս», - նշած է Փաշինեան:

Աւազանի անդամի մանդատին Փաշինեանը կը նախընտրէ պատգամաւորի մանդատը: Դաշինքն առայժմ չէ որոշած, թէ ով պիտի գլխաւորէ Երեւանի աւազանին մէջ իրենց խմբակցութիւնը: Հակառակ մանդատները վերցնելու փաստին, «Ելք»-ը կը պնդէ, որ կիրկաի օր կայացած ընտրութիւններուն՝ ՀՀԿ շտաբներէն համատարած ընտրակաշառք բաժնուած է, այդ գործընթացը ունեցած է կեղծոնացուած ու կազմակերպուած բնոյթ: Աւելին, ընդդիմադիր դաշինքը կը պնդէ, որ

իրաւապահները աջակցած են այս գործընթացին:

Նիկոլ Փաշինեանը, սակայն, յայտարարած է, որ հետընտրական պայքար պիտի չըլլայ, քանի որ հասարակութեան մօտ ընտրակաշառքի նկատմամբ ձեւաւորուած է հանրային հանդուրժողականութեան մթնոլորտ - «Եթէ 70 տոկոսը համարում ա, որ ինքը պէտք ա անապատացող քաղաքում ապրի, կամ պտի քաղաքին պատկանող 230 աֆթոպոլանները մնան փտեն հաւաքակայանում, իսկ «Գազել»-ներով իրանք կուցած պէտք ա գնան, իրանց ընտրութիւնն ա: Ես հիմա գնամ կանգառներ, դուռը բացեմ, էդ մարդկանց զօրով քաշեմ, ասեմ՝ էդ «Գազել»-ից դուս արի, մի՞ կուցիլդ Զեմ կարա: Եթէ ուզում ա, թող էդպէս երթեակի»:

«Ելք»-ը, այդուհանդերձ, իրաւական դաշտի մէջ պիտի շարունակէ պայքարը: Դաշինքի շտաբի պետ Էտմոն Մարուքեանը յայտարարած է, որ իրենց մօտ առկայ ընտրակեղծարարութեան փաստերով պիտի դիմեն դատախազութիւնը - «Հաղորդում է նախապատրաստուած գրգռող հանրապետական կուսակցութեան էդ ֆայլերի շրջանակներում քրէական գործ յարուցելու համար Գլխաւոր դատախազին ենք դիմելու, մանրամասն այդ երեսուն էջանոց փաստաթղթերը ներկայացուելու են, եւ հետեւողական ենք լինելու, որ բոլորը հարցաքննուեն, ուսումնասիրուի ամբողջութեամբ եւ մարդիկ պատասխանատուութեան ենթարկուեն»:

ՀՀԿ-ՀՅԴ Նոր Դաշինքի Համաձայնագիր Ստորագրեցին

Հայաստանի հանրապետական եւ Հայ լեզուափոխական դաշնակցութիւն կուսակցութիւններն այսօր նախագահական նստաւայրին մէջ ստորագրեցին քաղաքական դաշինք կազմելու մասին յուշագիր:

Դաշինքի յուշագրին մէջ ՀՀ վարչապետը առաջադրուած է Հայաստանի Հանրապետական կուսակցութեան կողմէ, որ սպառնիչ քաղաքական, իրաւական պատասխանն է այն մտահոգութիւններուն, թէ ինչ պիտի ըլլայ 2018-ին: «Այդ պատասխանները կտանք այդ ժամանակ, յատկապէս որ պատասխաններն էլ յստակ են եւ հիմնուած են Սահմանադրութեան վրայ», - ՀՀԿ-ՀՅԴ կողմից յուշագրի ստորագրումէն ետք լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը՝ պատասխանելով այն հարցին, թէ վարչապետ Կարէն Կարապետեանը

յայտարարած էր, որ պատրաստ է 2018-էն յետոյ ալ ըլլալ վարչապետ, այդ մէկը հաստատուած է:

Աշոտեանի խօսքով՝ նախորդ յուշագիրը հետընտրական էր, հետեւաբար ժամկէտային սահմանափակում ունէր:

«Նոր համաձայնագիրը լիարժէք կողմից ինչ համաձայնագիր է, որը լիարժէք համընկնում է Աժ լիազօրութիւնների հետ, խորհրդարանական հանրապետութեանը յատուկ բոլոր նոր էլեմենտներին: Օրինակ՝ պարտաւորուել ենք Սահմանադրութիւնից բխող օրէնքների հարցում որդեգրել համազօրեակցութեան սկզբունքը», - ըսած է Աշոտեանը:

Հարցին, թէ Աժ-ի ղեկավար կազմին մէջ ինչպէս պիտի արտացոլուի դաշինքը, Աշոտեանը նշած է, թէ կան յստակ մեխանիզմներ՝ որ քաղաքական ուժը քանի եւ ինչ տեսակ «պորտֆելներ» պէտք է ունենայ:

Երեւանի Աւագանի Ընտրութիւնը Աւելի Վատ Էր, Քան Խորհրդարանի Ընտրութիւնը



Ժամնա Ալեքսանեան

Դանիէլ Իոաննիսեան

«Իրագել քաղաքացիների միւստրուում» ՀԿ ծրագիրներու համակարգող Դանիէլ Իոաննիսեանը հակադրած է իշխանութեան ներկայացուցիչներուն, որոնք նշած են, թէ այս ընտրութիւններուն աւելի քիչ միջադէպեր արձանագրուած են, քան նախորդ ընտրութիւններուն. «Մեր եզրակացութիւնը հետեւեալն է՝ բռնութեան դէպքերը, համեմատելով Երեւանում Ապրիլի 2-ի ընտրութիւնների հետ, Երեւանում ուղղակի շեշտակի աճել են: Ապրիլի 2-ի ընտրութիւններին մեր դիտորդներից որեւէ մէկի նկատմամբ բռնութիւն չէր եղել, այս անգամ դիտորդների նկատմամբ բռնութեան երկու դէպք է արձանագրուել, նաեւ բռնութեան սպառնալիք դիտորդի նկատմամբ, ինչը նախորդ անգամ գրեթէ չէր եղել», Lragir.am-ի հետ զրոյցին ըսած է Դանիէլ Իոաննիսեանը:

Անոր խօսքով՝ փաստը այն է, որ այս ընտրութիւնները աւելի վատ էին եւ չէին արտայայտեր երեւանցիներու կարծիքը, քանի որ կար վարչական ռեսուրսի չարաշահում, կային նաեւ ընտրակաշառքներու բաւական արժանահաւատ փաստեր, եղած է քուէարկութեան գաղտնիութեան զանգուածային խախտումներ. «Քուէարկութեան գաղտնիութեան խախտումը նախորդ երկու ընտրութիւնների քոնթեքստում պէտք է դիտարկել, որովհետեւ մարդը, ում մից խոստում են կորզում, որ ինքը կը գնայ կը քուէարկի իրենց ցանկացած թեկնածուին, այդ մարդու միակ հնարաւորութիւնը քուէարկել նրան, ում ինքը իրապէս համակրում է, քուէարկութեան գաղտնիութիւնն է: Եւ երբ քուէարկութեան գաղտնիութիւնը խախտուած է, լրջագոյն խնդիր է դառնում քուէարկութեան արդիւնքների վրայ», - ըսած է Դանիէլ Իոաննիսեանը:

40,99 տոկոս մասնակցութիւնը, անոր խօսքով, պայմանաւորուած էր անով, որ շատ կուսակցութիւններ պարզապէս չէին մասնակցած

Թէ որո՞նք են դաշինքի յուշագրի եւ նախորդ համաձայնագրի հիմնական տարբերութիւնները, ՀՅԴ-ական Աղուան Վարդանեանը նախ նկատած է, թէ այդ տարբերութիւնը տեսանելի կ'ըլլայ հրապարակուելիք լուսանկարներուն մէջ՝ վարչապետներու փոփոխութեամբ:

Իսկ անուանման տարբերութիւնները, ըստ անոր, կը բխին ՀՀ սահմանադրութեանէն եւ Աժ կանոն-

ընտրութիւններուն, իսկ անոնք ունին որոշակի կայուն ընտրական խաւ «Նախորդ ընտրութիւններուն ՕՐՕ-ն հաւաքեց 3 տոկոս, ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը՝ երեք տոկոս, ԲԿԿ-ն 20 եւ աւելի, այս բոլոր ուժերն այս ընտրութիւններին չկային, նրանց ընտրողների մի մասը եկաւ քուէարկեց այս երեք ուժերից մէկին, բայց միւս մասը չեկաւ, մնաց տանը»:

Այս ընտրութիւններուն քիչ չէին նաեւ լրագրողներու նկատմամբ բռնութիւնները: «Լրագրողներ յանուն մարդու իրաւունքների» ՀԿ նախագահ, իրաւապաշտպան Թաննա Ալեքսանեանը Lragir.am-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ արձանագրուած միջադէպերը անպատժելիութեան մթնոլորտի առկայութիւնն են:

«Լրագրողների նկատմամբ բռնութիւնները գործադրողները երբեք չեն պատժուած: Եւ անգամ Սարի թաղի ռմբահարումներից յետոյ, երբ լրագրողները վնասուածքներ ստացան, այդ դէպքում որեւէ մէկը չպատժուեց: Եւ պարզ է, որ եթէ պատասխանատուութեան չեն կանչուած, նման դէպքերը պէտք է լինեն շարունակական», ըսած է իրաւապաշտպանը:

Ան նշած է, որ Զարուհի Փոսթանճեանի նկատմամբ բռնութիւններէն ետք ՀՀԿ-ի կողմէ քննադատութիւն հնչած է լրագրողներու հասցէին. «Ընդհանրապէս նրանք տանել չեն կարողանում, երբ իրենց որեւէ ապօրինիութիւն բացայայտուած է: Նրանք բացարձակ իշխանութիւն են ուզում: Այդուհանդերձ, շատ բարձր են գնահատում լրագրողների ջանքերը, ովքեր աշխատում են, բացայայտում են տեղամասերում կատարուած ապօրինիութիւնները: Բոլոր խախտումները կապուած են ՀՀԿ-ի հետ: Եւ լրագրողները այդ դժուար պայմաններում կատարում են իրենց պրոֆեսիոնալ պարտքը», ըսած է Թաննա Ալեքսանեանը՝ յոյս յայտնելով, որ օր մը անպատժելիութեան ժամանակաշրջանը կ'աւարտվի:

Նակարգ օրէնքէն: «Վերահաստատելով 16-ի փետրուարին կայացած համաձայնագրին հաւատարմութիւնը եւ դրանով ամրագրուած դրոյթների պատասխանատուութիւնը՝ փաստօրէն ինչ-որ առումով երկու իրար լրացնող փաստաթղթերի շարունակութիւնն է, որը ուժի մէջ է մինչեւ 22թ.-ը: Այստեղ ներառուած են հիմնական անելիքները», - ըսած է Վարդանեան:

ԼՈՒՐԵՐ

«ՀՀ-ի Մէջ Ռուսական Ռազմակայանը Չի Կրնար Օգտագործուիլ Սուրիոյ Կամ Իրաքի Ուղղութեամբ»։ Վ. Եւսէւ

Հայաստանի մէջ տեղակայուած ռուսական 102-րդ ռազմապազան «Խալաբախի պետութեան» դէմ պայքարի համար չի կրնար օգտագործուիլ: Tert.am-ի հետ զրոյցին այս մասին ըսած է Ռուսաստանի Դաշնութեան ԱՊՀ երկիրներու հիմնարկի Կովկասի բաժնի ղեկավար, ռազմական փորձագէտ Վլատիմիր Եւսէւը՝ անդրադառնալով ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լաւրովի յայտարարութեան, թէ ՀՀ-ի մէջ ռուսական ռազմակայանը պատրաստ է ԻՊ-ի դէմ պայքարելու:



Ռազմական փորձագէտ Վլատիմիր Եւսէւ

Հարուած կրնան հասցնել Սուրիոյ կամ Իրաքի ուղղութեամբ: Հասկնալի է, որ Թուրքիոյ տարածքով այդ ուղղութիւնները չեն թռչիր: 102-րդ պազան նպատակ չունի ԻՊ դէմ պայքարելու, անոր նպատակը Հայաստանի անվտանգութիւնը ապահովելն է հարեւան Թուրքիային», - ընդգծած է Եւսէւը:

Վ. Եւսէւ ըսած է, որ Գիւմրիի մէջ ռուսական ռազմապազանի եւ ԻՊ-ի միջեւ կ'անցնի թրջական սահմանը, որու վրայով օդանաւային թռիչքները անհնար են: Իսկ Լաւրովի յայտարարութիւնը, ըստ փորձագէտի, դիւրանազիտական ենոյթի է եւ քիչ հաւանական է, որ իր մէջ պարունակէ նման ծրագիրներ:

«Բացի այդ, Գիւմրիի մէջ տեղակայուած պազան ռազմաօդային չէ, այն ունի ռազմաօդային բաղադրիչ, որ ներկայացուած է հիմնական կործանիչ-կալանիչներով (խօսքը ՄԻԿ-29 ինքնաթիռներու արդիականացուած տեսակի մասին է), որոնք չեն կրնար օգտագործուիլ հարուածներու համար: Հայաստանի մէջ ռուսական ռազմապազան ունի Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան պաշտպանութեան նպատակ, ոչ թէ այլ պետութիւններու ուղղութեամբ ռազմական հարուածներ հասցնելու», - շեշտած է Վլատիմիր Եւսէւը:

Ռազմական փորձագէտը նշած է, որ 102-րդ պազան ռազմաօդային չէ, այն ցամաքային զօրք է, որ ունի ռազմաօդային բաղադրիչ, եւ բացի ՄԻԿ-29-էն, կան նաեւ ուղղաթիռներ: Եւսէւ ըսած է, որ ուղղաթիռները կրնան հարուած հասցնել, բայց անոնք ունին թռիչքի հեռաւորութեան սահմանափակում:

«Չեմ պատկերացներ, թէ ինչպէս Հայաստանի մէջ ռուսական ռազմապազանի ուղղաթիռները

Ատրպէյճանի Խոշորագոյն Դրամատուներ Դադրեցուցած Է Վարկատուներու Վճարումները

Ատրպէյճանի Խոշորագոյն Միջազգային դրամատուներ, որ երկրի մէջ արժույթի պակասի եւ արժուրէրի սուր ճգնաժամի հետեւանքով անանկացման շեմին է, դադրեցուցած է արտաքին պարտքի վճարումները եւ վարկատուներու հետ բանակցութիւններ պիտի սկսի վերակառուցման շուրջ, կը յայտնէ Forbes-ը:

10 Մայիսին Ատրպէյճանի միջազգային պանքը (ԱՄՊ) հիմնական պարտքի եւ 100 միլիոն տոլար վարկի տոկոսներու վճարումներ չէ կատարած, նշուած է պետական դրամատան հաղորդագրութեան մէջ: Արտարժույթով անոր պարտքի մէկ մասը պիտի փոխարինուի Ատրպէյճանի պարտատոմսերով, իսկ առաջարկուող վերակառուցման ծրագիրը պարտադիր պիտի ըլլայ, եթէ վարկատուները անոր հաւանութիւն տան, որոնց բաժին կ'իջնայ դրամական արտաթափումներէ պարտքի երկու երրորդը:

Դրամատան 2019 թուականին մարտուղ պարտատոմսերու գինը 15 տոկոսով ինկած է, իսկ եկամտա-

բերութիւնը աճած է մինչեւ 14,188 տոկոս: Դրամատուներ վճարումներու դադրեցումը «ցաւալի» անուանած է: «Անհրաժեշտ են յետագայ շտապ միջոցառումներ Ատրպէյճանի միջազգային պանքի երկարաժամկետ կենսունակութեան պահպանման համար», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

Հարկ է նշել, որ դրամատուներ նաեւ դուստր կազմակերպութիւն ունի Ռուսաստանի մէջ՝ ԱՄՊ-Մոսկուա: 2002 թուականի յունուարին այն բացուած է Ատրպէյճանի իշխանութիւններու աջակցութեամբ եւ անոր կը պատկանի դրամատան 100 տոկոսը: Այն կը մտնէ ապահովագրական աւանդներու համակարգի եւ ըստ պահուստներու (24 միլիարդ ռուբլի) հիմնական 150 դրամատուներու մէջ: Ապրիլին անոր հաշինին ընկնակցային յաճախորդներու միջոցներու մօտ 2,1 միլիարդ ռուբլի եւ ֆիզիքական անձանց միջոցներու մօտ 600 միլիոն ռուբլի կար:

Սերժ Սարգսեանը Քաթարի Էմիրի Իետ քննարկած Է Մուտքի արտօնագրի ազատականացման հարցը



ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան առանձնազրոյց ունեցած է Քաթարի Էմիր Թամիմ պըն Համատ Ալ Թանի

Պաշտօնական այցով Քաթարի Պետութիւն գտնուող ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան առանձնազրոյց ունեցած է Քաթարի էմիր Թամիմ պըն Համատ Ալ Թանիի հետ:

Հանդիպման ժամանակ նախագահը շնորհակալութիւն յայտնած է էմիրին բարեկամ Քաթարի Պետութիւն այցելելու հրաւերի եւ իր գլխաւորած պատուիրակութեան ցուցաբերուող ջերմ ընդունելութեան համար:

Ջրուցակիցները երկուստեք յոյս յայտնած են, որ Հայաստանի նախագահի Քաթար առաջին այցի արդիւնքները իրենց լուրջ ներդրումը կ'ունենան հայ-քաթարական յարաբերութիւններու յետագայ զարգացման վրայ: Անոնք խորհրդանշական համարած են, որ այցելութիւնը տեղի ունեցած է Հայաստանի եւ Քաթարի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու

հաստատման 20-ամեակի տարին, որ, կողմերու համոզմամբ, պատեհ առիթ է հայ-քաթարական յարաբերութիւնները վերաիմաստաւորելու եւ անոնց նոր խթան հաղորդելու համար:

Ջրուցակիցները քննարկած են երկու երկիրներու միջեւ մուտքի արտօնագրի ազատականացման հնարաւորութիւնը, ինչպէս նաեւ փոխադասակցութեան համագործակցութեան ծաւալման նպատակով քաթարական օդանաւային ընկերութեան հետ համագործակցութիւնը զարգացնելու հեռանկարը:

Հանրապետութեան նախագահը եւ Քաթարի էմիրը փոխադասակցութեան արտօնագրի համագործակցութեան խթանման տեսանկիւնէն կարեւորած են երկու երկիրներու միջեւ իրաւապայմանագրային դաշտի ընդլայնումը:

Ջրօսաշրջիկներու Շուրջ 98 Տոկոսը Հայաստանէն Գոհ ու Երջանիկ կը Մեկնին

Այս տարուայ առաջին եռամսեակին Հայաստան այցելած զբօսաշրջիկներու թիւը աճած է 18,23 տոկոսով, ինչը աննախադէպ աճ է: Այս մասին կառավարութեան երէկուան նիստին ետք լրագրողներուն ըսած է Ջրօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահ Ջարմինէ Զէյթունցեանը:

«Մենք նպատակ ունենք մինչեւ այս տարեվերջ, շատ ամբիցիոզ է հնչում, բայց կրկնապատկել զբօսաշրջիկներին թիւը: Այդ առումով հսկայական աշխատանք ենք տանում: 2016 թուականին էլ 2015-ի համեմատ 5.9 տոկոսով է աճել Հայաստան այցելած զբօսաշրջիկների թիւը», ըսած է ան: Այս տարի

ամենաշատ թիւով զբօսաշրջիկներ Հայաստան եկած են Իրանէն, Ռուսաստանէն, Ֆրանսայէն եւ Չինաստանէն:

Անդրադառնալով Հայաստանի ճանապարհներու վատ վիճակին, ինչը խոչընդոտ կը հանդիսանայ նաեւ զբօսաշրջութեան զարգացման համար, Ջարմինէ Զէյթունցեան ըսած է՝ 2013 թուականին իրականացուած զբօսաշրջանի հետազոտութիւններու հիման վրայ պարզուած է, որ զբօսաշրջիկներու շուրջ 98 տոկոսը Հայաստանէն գոհ ու երջանիկ մեկնած են, միայն ճանապարհներու վատ վիճակէն դժգոհած են: 2013 թուականէն մինչեւ օրս այդ դժգոհութիւնը կայ:

Հարուածներ Ղարաբաղի Ուղղութեամբ

Շարունակուած էջ 1-էն

Ժէքը մօտ 200 հազար տոլար է: «Ինչպէս էլ չի, որ հենց առաջին խոցումից, առաջին արձակումից կարողացել են դիպչել: Դա, բնականաբար, իրենք չեն խոստովանի: Քողարկման գործողութիւնները, զրազէտ մարտապարական աշխատանքը թոյլ է տուել խուսափել մեծ վնասներից, տուեալ դէպքում համալիրի կորստից», - պարզաբանած է Արծրուն

Յովհաննիսեան:

Վերջին անգամ ատրպէյճանական կողմը «Սփայք» հրթիռներ կիրառած էր անցած տարի՝ ապրիլեան պատերազմի օրերուն: Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը պաշտօնապէս դատապարտած է ատրպէյճանական կողմի հրթիռային հարուածները՝ անոնք «սադրիչ գործողութիւններ» որակելով: Դարբաբաբեան կողմն ալ յայտարարած է՝ «սադրանքն անպատասխան չի մնալու»:

Ռիչարտ Յոկլանտ

«Մինսքի խումբը Չի Յանձնուիր Եւ Կայուն Խաղաղութեան Ուղիներ Կը Փնտռէ»

Մինսքի խումբը չի յանձնուիր եւ կայուն խաղաղութեան ուղիներ կը փնտռէ: Այս մասին Ուաշինկթընի մէջ յայտարարած է ԵԱՀԿ Մինսքի խումբի ամերիկացի համանախագահ Ռիչարտ Յոկլանտը՝ ելոյթ ունենալով Atlantic Council վերլուծական կեդրոնի հարթակէն կազմակերպուած «Հայ-Ատրպէյճանական հակամարտութեան միջազգային քաղաքականութիւնը» համաժողովին:



Մինսքի խումբի ամերիկացի համանախագահ Ռիչարտ Յոկլանտ

Հիմնարար սկզբունքներու վրայ՝ ուժի անկիրառութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ ազգերու ինքնորոշումը:

Խօսելով դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի մասին՝ ամերիկացի դիւանագետը նշած է, որ ինքը կը կայանայ այն բանի մէջ, որ այսօր հայերու եւ ատրպէյճանցիներու երիտասարդ սերունդը իրար հետ շփում չունի եւ համապատասխանաբար չունի վստահութիւն իրար նկատմամբ:

Հոկլանտ ընդգծած է, որ Մինսքի խումբը կը հիմնուի երեք

Ատրպէյճանական Զինուժը Գնդակոծած է «Շանթ» Զեռուստարնկերութեան

Շարունակելով իր սահմանային խախտումները եւ նոյնիսկ ոչ զինուորական թիրախները հարուածելու սովորութիւնը, ատրպէյճանական կողմը կրակ բացաւ հայկական «Շանթ» հեռատեսիլի կայանի «Դիրքերում» հաղորդաշարը նկարահանող խմբակի ինքնաշարժին վրայ: Հրաձգութեան հետեւանքով վիրաւորուեցաւ խմբակի նկարահանողներէն Դաւիթ Աթոյեանը, իսկ ինքնաշարժը կրեց նիւթական վնասներ: Հայկական կողմի պատասխան գործողութիւններէն ետք հակառակորդին կրակոցները դադրեցան: Վիրաւորը փոխադրուեցաւ Ստեփանակերտի հիւանդանոց եւ ենթարկուեցաւ վիրաբուժական գործողութեան: Անոր վիճակը կայուն է:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը խոստովանեցաւ «Շանթ» ի ինքնաշարժին վրայ կրակելուն մասին: Հակառակորդի պաշտպանութեան նախարարութիւնը հաստատեց, որ կրակ բացած է ինքնաշարժին վրայ, սակայն որպէս պատասխան՝ այդ նոյն ինքնաշարժին ատրպէյճանական

կան դիրքերուն վրայ արձակուած կրակոցներուն: Ըստ ատրպէյճանական կողմին, ինքնաշարժը որեւէ տարբերիչ նշան չունէր զայն զանազանելու համար Արցախի պաշտպանութեան ուժերու մեքենաներէն:

Արցախի Հանրապետութեան նախագահի մամուլի քարտուղար Դաւիթ Պապայեան յայտարարեց, որ Ատրպէյճան պարբերաբար կը խախտէ ժընեւի ուխտը եւ Միջազգային մարդասիրական իրաւունքի դրոյթները: Անոր համաձայն, հակառակորդը լաւ դիտէր, թէ ինքնաշարժին մէջ կային լրագրողներ, որոնք նկարահանումներ կը կատարէին սահմանային գոտիին վրայ:

«Մենք գործ ունինք ահաբեկչական պետութեան հետ, որ ոչ միայն չի հետեւիր միջազգային սկզբունքներուն, այլեւ պարբերաբար յարձակումներու կը ձեռնարկէ միջազգային օրէնսդրութեամբ հսկող խումբերու եւ թիրախներու վրայ՝ ներառեալ լրագրողներու եւ շտապ օգնութեան խմբակներ», ըսաւ Պապայեան:

Տեղական Դիտորդներու Կարծիքով

Շարունակուած էջ 1-էն

քաղաքապետի թեկնածու Տարօն Մարգարեանի ստացած 71 տոկոս ձայնը չ'արտացոլեր երեւանցիներու կամքը:

«Անկախ դիտորդ» նախաձեռնութեան անդամ, իրաւապաշտպան Արթուր Սաքունցը նոյնպէս կը կարծէ, որ երեւանցիներու կամքը հաշուի չ'է առնուած: Սաքունցը չի շեղուցած է ընդամենը օրեր առաջ ընդդիմադիր «Ելք»-ի ահազանգը ընտրակաշառքի մասին եւ այդ հարցով բողոքի մերժումը կեդրոնական ընտրական յանձնաժողովի կողմէ: Ըստ անոր, յանձնաժողովը նոյնիսկ հակափաստարկներ չ'է բերած՝ չ'փարատելով ընտրակաշառքի վերաբերեալ կարծիքները:

«Տիրապետող Մուկուչեանի գլխաւորած յանձնաժողովը զբաղուած է Հանրապետականի շահերի պաշտպանութեամբ», - պնդած է իրաւապաշտպանը: - «Այս պարագայում

70 տոկոս ձայն հաւաքած կուսակցութեան մասնակցութեան դէպքում ընտրութեան արդիւնքները չեն համապատասխանում իրականութեանը: Կեղծուած են»:

Դիտորդները ընդգծած են, թէ այս ընտրութիւնները ետքայլ են մէկուկէս ամիս առաջ իրականացուած խորհրդարանական ընտրութիւններու համեմատ:

«Անկախ դիտորդ» նախաձեռնութեան անդամ, «Իրազեկ քաղաքացիներ» միաւորման ներկայացուցիչ Դանիէլ Իոաննիսեանը թուարկած էր արձանագրածը. - «Ինչպէս է տեղի ունենում ձայների մի գոյնի մասի, այդ 70 տոկոսի մի գոյնի մասին գոյացութիւնը: Մարդկանց վրայ կիրառուած են ճնշումներ՝ վարչական ռեսուրսի չարահաման տեսքով, մարդկանց տալիս են ընտրակաշառք՝ յաճախ այնպէս, որ այդ ընտրակաշառքից չի կարելի հրաժարուել: Եւ երբորդ կարեւոր քաղաքացիներ՝ մարդկանց քուէար-

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԳԱՅ ՄԱՅՄՈՒՏ ԱՊՊԱՍ ԶՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Անցեալ Կիրակի երեկոյեան, Պաղեստինի պետութեան նախագահ Մահմուտ Ապպաս Հնդկաստան այցելեց եւ դիմաւորուեցաւ Նոր Տէլհիի օդակայանին մէջ:

Չորս օրուան սոյն այցելութեան ընթացքին պիտի զրուցէ վարչապետ Նարէնտրա Մօտիի եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններու հետ: Անոնք զլիաւորաբար քննարկումի նիթ պիտի դարձնեն տեղական եւ միջազգային հարցեր, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

Այս առթիւ Հնդկաստանի արտաքին գործոց նախարարը նշեց որ սոյն այցելութեան ընթացքին տարբեր կառույցներու եւ հարթակներու վերաբերեալ, երկկողմանի համաձայնագրութիւններ պիտի ստորագրուին: Արդարեւ Հնդկաստանի եւ Պաղեստինի միջեւ գոյութիւն ունին պատմական եւ բարեկամական սերտ կապեր եւ զօրակցութիւն պաղեստինեան դատին: Նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրատարակելով, յայտնեց թէ Հնդկաստան պիտի շարունակէ թիկունք կանգիլ Պաղեստինի բարգաւաճման ծրագիրներուն, յատկապէս երկարաձգելով ֆինանսական եւ թեքնիքական աջակցութիւնները:

ՏԵՐ ԶՕՐ ՈՒԺԵՂ ՌՍԲԱԿՈՑՈՒՄՆԵՐՈՒ ՏԱԿ

Սուրիական ՍԱՆԱ գործակալութեան մէկ հաղորդագրութեան համաձայն Իսլամական Ահաբեկչական պետութեան խմբակները ուժակոծած են Սուրիոյ արեւելեան շրջանի Տէր Զօր քաղաքի բնակարանային թաղամասերը, պատճառ դառնալով 20 հոգիներու վիրաւորուելուն:

Նշենք նաեւ շուրջ 200,000 բնակիչ հաշուող Տէր Զօր քաղաքը պաշարման ներքեւ է 2014 թուականէն ի վեր: Ընդդիմադիրները կրցած են գրաւման տակ առնել քաղաքի զինուորական օդակայանը, ուր կը գտնուին նաեւ մեծ թիւով կառավարական գործքեր:

ԻՐԱԲԵԱՆ ՕԴԱՆԱԲ ՄԸ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԹԻՐԱՆ ԶԱՆԴԻՍԱՅԱԾ

Մուսուլ քաղաքի արեւմտեան կողմը Տահէշ Իսլամական ընդդիմադիր ուժերը ուժեղացրելու պահուն իրաքան օդուժի սաւառնակ մը թիրախ հանդիսացաւ հակառակորդներու կողմէ: Այսուհանդերձ իրաքան գործքերը կրցան ազատագրել Տիգրիս գետի արեւմտեան եւ հարաւային շրջաններու բնակավայրերը, որոնք կը գտնուին Մուսուլ քաղաքի Արեւմուտքը:

Ներկայի ճիգերը կեդրոնացած են ամբողջովն ազատագրելու Տահէշի ամրոցը նկատուող Մուսուլը:

Արդարեւ վերջերս իսլամիստ ծայրայեղականները 10 հոգիներ գնդակահարած էին, արեւմտեան Մուսուլ քաղաքէն փախուստ տուած ըլլալուն համար: Նոյն պատճառով 64 քաղաքայիններ եւս սպաննուած են ներառեալ երեխաներ:

ՔՈՒՆԵՐԱՅԻ ԶԱՄԱՃԱՐԱԿ ԵՆՄԵՆԻ ՄԷՋ

Եէմէնի մայրաքաղաք Սանաայէն ֆրանսական AFP մամուլի գործակալութեան համաձայն երկրի ընդդիմադիրներու իշխանութիւնը ահազանգային վիճակ յայտարարած են: Արդարեւ քոլերայի մահասփիւռ համաճարակն սկսած է հետզհետէ տարածուիլ, պատճառ հանդիսանալով տասնեակներու մահուան: Այս կապակցութեամբ ահազանգ հնչեցուցած են պահանջելով միջազգային շտապ օգնութիւն:

Միջազգային կարմիր խաչի տուեալներուն համաձայն Ապրիլ 27էն ի վեր 184 հոգի մահացած է քոլերայէն: Իսկ երկրէն ներս 11,000 հոգի այդ վարակէն ազդուած ըլլալու կասկածանքի ներքեւ են:

Վերոյիշեալ տագնապի լուծման համար մարդասիրական շտապ օգնութեան աղերս ներկայացուած է միջազգային պատկան կազմակերպութիւններուն:

Նշենք նաեւ որ երկրէն ներս սովը հասած է ահաւոր համեմատութիւններու:

Հայաստանի Պետական Պարտքը

Շարունակուած էջ 1-էն

թեան մակարդակը աճած է, հակառակ գրանցուած տնտեսական աճին: Եթէ 2015 թուականին բնակչութեան 22.6 տոկոսը աղքատ էր, ապա անցած տարի՝ 23.9 տոկոսը:

Պանքի փորձագէտներու գնահատմամբ, Հայաստանի բնակչու-

թեան 23.9 տոկոսը օրական 2.5 տոլարէն քիչ կը ծախսէ: Իսկ եթէ շեմը կը դիտարկենք օրական 5 տոլարը, ապա, ըստ զեկոյցի, անցած տարի աղքատ էր Հայաստանի բնակչութեան 73.4 տոկոսը: Այսինքն՝ 2016 թուականին Հայաստանի բնակչութեան գրեթէ 3/4-րդը օրական ծախսած է 2 հազար 500 դրամէն քիչ գումար:

կութեան գաղտնիութիւնը խախտում են, որպէսզի տեսնեն, թէ էս մարդիկ ոնց քուէարկեցին: Այս

պայմաններում մարդիկ յաճախ չեն կարող, ուզում են քուէարկել այլ ուժի, բայց չեն կարողանում:

www.massisweekly.com
daily news updates

Բախումներ Մոսկուայի Մէջ՝ Հայերու Եւ Ատրպէյճանցիներու Միջեւ



Մոսկուայի մէջ 9 Մայիսին կայացած շքերթի ժամանակ հայերու եւ ատրպէյճանցիներու միջեւ միջադէպ տեղի ունեցած է:

«Salam News»-ի փոխանցմամբ, «Անմահ գունդ» կոչուող շքերթի ժամանակ, երբ հարազատները կը տանէին 1941-45 թուականներու Հայրենական պատերազմի ընթացքին զոհուած իրենց նախնիներու լուսանկարները, Ռուսաստան բնակող հայերը շքերթին բարձրացուցած են Լեռնային Ղարաբաղի դրօշը: Ատրպէյճանցիները իրենց հերթին բարձրացուցած են իրենց երկրի դրօշը եւ սկսած են բացականչել՝ «հեռացուցէ՛ք փալաքը»:

«Salam News»-ի տեսանկյունից եւ լուսանկարներէն կ'երեւի, որ երկու խումբերէն իրեր նետուած են իրար վրայ, ռուսական յատուկ ջոկատայինները կանգնած են հայերու եւ ատրպէյճանցիներու միջեւ:

Ատրպէյճանական APA գործակալութիւնը կը հաղորդէ, որ միջադէպը տեղի ունեցած է Մոսկուայի մէջ ընդհանուր «Պելաուսկայա» կայարանի մօտ:

Լստ այս գործակալութեան, Ռուսաստանի մէջ հայկական սփիւռքի ներկայացուցիչները «Արցախ» վանկարկած են՝ ծածանելով Ղարաբաղի դրօշը: Ատրպէյճանական սփիւռքի ներկայացուցիչները պահանջած են հեռացնել «անջատական ռեժիմի» դրօշը, սակայն հայերը յարձակած են անոնց վրայ, ինչի արդիւնքով քանի մը ատրպէյճանցիներ տուժած են: Այնտեղ գտնուող ոստիկանները իսկույն միջամտած են: Ատրպէյճանցիները ոստիկաններէն ու յատուկ ջոկատայիններէն եւս պահանջած են հեռացնել Ղարաբաղի դրօշը, բայց անոնք ուշադրութիւն չեն դարձուցած այդ պահանջներուն վրայ:

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Քրեական Կապերու Մէջ Կասկածուող Հայ Գործարարին Դիւանագիտական Անճապիր Տրուած Է

Սոչիի մէջ հայ գործարար Ռուբէն Թաթուլեանին, որու անունը լրատուամիջոցները կը կապեն քրեական աշխարհի հետ, Հայաստանի դիւանագիտական անձնագիր տրամադրուած է օրէնքով սահմանուած կարգով՝ «Ազատութեան» հետ զրոյցին հաստատած է ԱԳՆ մամուլի քարտուղար Տիգրան Բալայեանը:

Բալայեանը, սակայն, չէ յտակեցուցած թէ որ գործառույթի համար եւ ինչ նպատակով Թաթուլեանը ստացած է անձնագիրը: Արտաքին գերատեսչութեան մամուլի պատասխանատուն միայն յղում ըրած է օրէնքին:

Նշենք, որ «Դիւանագիտական ծառայութեան մասին» ՀՀ օրէնքի 49-րդ յօդուածին մէջ կ'ըսուի, որ անունին դէպքերու պարագային դիւանագիտական անձնագիր կրելու իրաւունք ունին «այլ անձինք»՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի թոյլտուութեամբ:

«Ազատութիւն»ը այս մասին գրաւոր հարցում ուղարկած է նաեւ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Վլատիմիր Յակոբեանին՝ ճշտելու համար, թէ երբ եւ ինչ նպատակով Թաթուլեանին յատկացուած է դիւանագիտական անձնագիրը:

Յիշեցնենք՝ երէկ ռուսաստանեան լրատուամիջոցները հաղորդած էին, որ Չեխիայի մէջ ձերբակալուած Թաթուլեանի մօտ յայտնաբերուած է ՀՀ դիւանագիտական անձնագիր: Ռուսական լրատուամիջոցները նաեւ կը յայտնեն, որ Չեխիայի մէջ պէտք է կայանար «գողական սխողկա» եւ օրէնքով գողերու թագադրութիւն, որ ՉՀ ՆԳՆ կազմակերպուած յանցագործութիւններու դէմ հակագործողութիւններու վարչութեան աշխատակիցները խափանած են:

Ռուբէն Թաթուլեանը նաեւ «Հայաստանի ներդրողներու ակումբի» անդամ է եւ մէկն է այն 30 գործարարներէն, որոնք 25 Յունուարին աշակցութիւն յայտնած էին նախագահ Սերժ Սարգսեանին

Հատ բան փոխելու ցանկութիւն»:
Ինչ կը վերաբերի յառաջիկայ 5 տարուայ համար Հայաստանի ապագային, Կարէն Կարապետեան ըսած է. «Հինգ տարի յետոյ Հայաստանում շատ բան պէտք է փոխուի՝ որոշումներ կայացնելու ընթացակարգը, հասարակութեան եւ էլիթայի յարաբերութիւնները, հասարակական կեանքում էլիթայի



եւ վարչապետ Կարէն Կարապետեանին՝ Հայաստանի մէջ խոր բարեփոխումներ իրականացնելու գործին համար: «Ազատութիւն»ը Տնտեսական զարգացման եւ ներդրումներու փոխնախարար Յովհաննէս Ազիզեանէն հետաքրքրուած է՝ արդեօք մտահոգութիւն չկայ, որ այս լուրը կրնայ ազդել Հայաստանի վարկանիշին վրայ:

«Ինչ էի թուում, որ դրանք կապուած բաներ են: Նա ներդրողների ակումբի 30 անդամներից մէկն է եւ ծրագրերը, իմ կարծիքով, նորմալ շարունակուելու են», - նշած է Ազիզեանը:

«Ազատութիւն»ը հետաքրքրուած է արդեօք Հայաստանի մէջ ներդրումներ ընելու պատրաստակամութիւն յայտնած միւս 29 գործարարներու կենսագրութիւնը ուսումնասիրած են, անոնք ալ կապեր ունին քրեական աշխարհի հետ, Ազիզեանը պատասխանած է, որ չեն ուսումնասիրած, սակայն ան վստահեցուցած է, որ համապատասխան մեխանիզմներով կը ստուգուին այն աղբիւրները, որոնցմէ ստացուած են գումարները եւ որ Հայաստան մուտք կը գործեն միայն մաքուր գումարներ:

տեղի ընկալումը, մեր քաղաքացիների կրթութեան մակարդակը, պիզնէսի վաւերական պայմանները»:

2018 թուականի Ապրիլին Սերժ Սարգսեան կ'աւարտէ իր նախագահութեան երկրորդ շրջանը, եւ այդ պահէն սկսեալ Հայաստանը ամբողջութեամբ կը դառնայ խորհրդարանական հանրապետութիւն:

Կարէն Կարապետեան - «Պատրաստ եմ 2018-էն Յետոյ Մնալ Վարչապետի Պաշտօնին Վրայ»

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան պատրաստ է 2018 թուականին, երբ կ'աւարտի Սերժ Սարգսեանի նախագահութեան ժամկէտը՝ մնալ վարչապետի պաշտօնին եւ դառնալ երկրի ղեկավար: Այս մասին ան նշած է Աւստրիական ռատիոյին տուած հարցազրոյցի ընթացքին:

Հարցին՝ թէ պատրաստ է վարչապետ մնալ 2018 թուականին եւ դառնալ հանրապետութեան ղեկավար, ան հակիրճ պատասխանած է. «Պատրաստ եմ»:

«Իսկ Դուք կ'ուզէ՞ք մնալ, հարցին ան արձագանգած է. «Ես այս հարցին չափազանց իրատեսօրէն եմ մօտենում: Երբեք չեմ երազել վարչապետ լինել, եւ ոչ էլ ձգտել եմ գործադիր իշխանութեանը: Իմ աչսօրուայ պատրաստակամութիւնը ես ձեւակերպում եմ ոչ թէ որպէս իշխանութեան ձգտում, այլ որպէս մեր երկրում

Հայերու ու ատրպէյճանցիներու միջեւ բախումները կանխելու նպատակով յատուկ ջոկատայինները ուղեկցած են հայերուն, իսկ ատրպէյճանցիներուն որոշ ժամանակ պահած են այնտեղ՝ աւելի ուշ թողելով մասնակցի շքերթին:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԱՄՆ-ի Դեսպանատան Կազմակերպութեամբ Հայաստանի մէջ Վերականգնուող Ուժանիւթի Զարգացման Նուիրուած Համաժողով



ՀՀ կառավարութիւնը կը խրախուսէ ուժանիւթի զանազանութիւնն ու կանաչ ուժանիւթի արտադրութիւնը: Այս մասին, Մայիս 17-ին, Երեւանի մէջ մեկնարկած Հայաստանի մէջ վերականգնուող ուժանիւթի զարգացման հեռանկարներուն նուիրուած մէկօրեայ համաժողովի ժամանակ նշած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Ռիչարտ Միլըրը:

«25 տարի առաջ ԱՄՆ պետքարտուղարութեան մէջ ես նորանկախ Հայաստանի Հանրապետութեան հետ կապուած հարցերով կը զբաղուէի, շատ լաւ կը յիշեմ այդ ժամանակները: Ձեր մէջ ալ կը կարծեմ կան այն տարիքի մարդիկ, որոնք կը յիշեն, որ անկախութեան առաջին տարիներուն Հայաստանի մէջ ուժանիւթի իրավիճակը շատ անկայուն էր: Հոսանքի անջատումները կանոնաւոր բնոյթ ունէին: Մարդիկ ծառեր կը հատէին, որպէսզի տունները ջեռուցէին: Իրական

հայաստանեան պաշտօնեաներու ու մասնաւոր հատուածի ներկայացուցիչներու համար կազմակերպուած ճանաչողական այցը դէպի ԱՄՆ, ուր անոնց ներկայացուած է արեւային ուժանիւթի արտադրութեան լաւագոյն փորձը:

Համաժողովին իրենց փորձը ներկայացնելու եւ Հայաստանի մէջ առկայ գործարար հնարաւորութիւններուն ծանօթանալու համար ներկայացուցիչներ գործուղած էին եօթ ամերիկեան ընկերութիւններ՝ Հանիւրը Պիւտինկ Սոլուշընս, Հանիւրը Սմարթ Էներձի, ՄաքԼին Փաուլըր Սիսթըմզ, Ֆրոսթ Սոլըր Փաուլըր Սոլուշընզ, Քաթըրինա Վալըր, Վալըր Վալըր Կլոյլը: Համաժողովին զեկուցումներով հանդէս եկած են նաեւ Միջազգային ֆինանսական կաշառակերութեան, Գերմանիոյ զարգացման KfW պանքի, Ամերիկա պանքի, զուիցերիական Meeco Group-ի եւ ՀՀ կառավարութեան ներկայա-



ճգնաժամ էր: Սակայն Հայաստանը մթութեան ու սղութեան առջեւ տեղի չտուաւ, այլ բարեկամներու ու գործընկերներու օգնութեամբ, ինչպիսին է Միացեալ Նահանգները, կըրցաւ դառնալ երկիր մը, որ ի վիճակի է հոգալ սեփական կարիքները, եւ դեռ աւելին, կրնայ արտահանել ելեկտրական ուժանիւթի աւելցուկը», - ըսած է դեսպան Միլըրը:

Ան ընդգծած է էլեկտրային ուժանիւթի զանազանութիւնը ու կանաչ ուժանիւթի արտադրութիւնը խրախուսելու ուղղութեամբ ՀՀ կառավարութեան արժէքաւոր աշխատանքը, այդ շարքին եւ Յունուարին կազմակերպուած Արեւային ուժանիւթի ներդրումային համաժողովը: Դեսպանը նաեւ նշած է այս ոլորտի մէջ ԱՄՆ-ի ու Հայաստանի գործակցութեան մասին, մասնաւորապէս՝ անցած ամիս

ցուցիչները:

«Առաջնորդելով վերականգնուող աղբիւրներու օգտագործմամբ ուժանիւթի ոլորտի զանազանութեան եւ ուժանիւթի խնայողական ծրագիրներուն ուղղուած աշխատանքները՝ ՀՀ կառավարութիւնը մշակած եւ ներդրած է մեխանիզմներ եւ ծրագիրներ, որոնք թոյլ կու տան զարկ տալ վերականգնուող եւ արեւային ուժանիւթի աճին Հայաստանի մէջ: Իսկ ԱՄՆ կառավարութիւնը պատրաստ է շարունակել գործակցութիւնը Հայաստանի հետ, ինչպէս եղած է վերջին 25 տարիներու ընթացքին», - ըսած է դեսպան Միլըրը:

Համաժողովը կազմակերպած էր ՀՀ-ի մէջ ԱՄՆ դեսպանատունը՝ ՀՀ ուժանիւթի ենթակառուցուածքներու եւ բնական պաշարներու նախարարութեան հետ համատեղ:

Փերմիաքովը Պատիժը Ռուսաստանի Մէջ Պիտի Կրէ



ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը, հաշուի առնելով Գիւմրիի մէջ Աւետիսեաններու սպանութեան դէպքի հասարակական հնչեղութիւնն ու հանրային հետաքրքրուածութիւնը, կը տեղեկացնէ, որ ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը ստացած է Ռուսաստանի Դաշնութեան դատարանի որոշումը Շիրակի մարզի ընդհանուր իրաւասութեան առաջին ատենի դատարանի կողմէ 2016 թուականի 23 Օգոստոսին կայացուած դատավճիռը ճանչնալու եւ Ռուսաստանի Դաշնութեան տարածքին մէջ կատարելու մասին: Այս մասին կը յայտնեն ՀՀ ԱՆ տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեանէն:

ԱՆ հաղորդագրութեան մէջ ըսուած է. «ՌԴ դատարանի

որոշումը երաշխաւորում է ՀՀ դատարանի կողմից ցմահ ազատագրկման դատապարտուած ՌԴ քաղաքացի Վալէրի Փէրմիաքովի դատավճռի կատարումը անվերապահօրէն ու լիովին՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան միջեւ գործող միջազգային պայմանագրերով սահմանուած կարգով:

Յայտնի է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրաւասութեան առաջին ատենի դատարանի կողմէ 2016 թուականի 23 Օգոստոսին կայացած է դատավճիռ Ռուսաստանի Դաշնութեան քաղաքացի Վ. Փէրմիաքովի նկատմամբ, որ մեղաւոր ճանչցուած է ՀՀ քրէական օրէնսգիրքի 104-րդ յօդուածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կէտերով,

Շար.ը էջ 19

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES


Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճեմի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, բոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ
-Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...

Passport and Immigration Photos



Jenny Abrahamian
Թարգմանութիւններ՝
Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն
-Լիազօրագրեր/ Appostille

Ծառայութիւններ
-Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան բոշակ SSI-SSA
-Medi-Cal
-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի



LIVE SCANS
Fingerprinting

Նոտար/Notary

Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին

Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

ԱՐԱՐԱՏԻՆ ԴԻՄԱՅԱՅԵԱՅ ԲԱՐՁՈՒՆՔԻՆ ԿՐԱՅ «ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ» ՊԻՏԻ ԿԱՌՈՒՑՈՒԻ



Հայաստանի մէջ կը նախատեսուի կառուցել «Նոյեան Տապան» պատմամշակութային, գիտակրթական համալիր: Այդ նպատակով ստեղծուած է հիմնադրամ, որ կը կրէ «Կառուցենք ազգովի» խորագիրը:

Հիմնադրամի հասարակայնութեան հետ կապերու բաժինէն կը յայտնեն, որ կ'առաջարկուի մէկտեղել «հայրենիքի հարաւորութիւնները համաշխարհային նշանակութեան այս ձեռնարկը իրականութիւն դարձնելու համար»:

Արձէշ քաղաքի (Վանայ լիճի հիւսիս-արեւելք) հայ բնակչութեան հետ առնչուած դէպքերը անյարիր են ժխտողական խօսուածքին (dis-course): Պրն. Սարաֆեան իր բանախօսութիւնը կեդրոնացուցած էր Արձէշի դէպքերուն պատմութեան վրայ, զայն օգտագործելով Վանի ապստամբութեան շրջանը զօնելու համար: Վանի շրջանը, որ աւելի քան յիսուն հայկական գիւղեր ունէր՝ 10,000-է աւելի բնակչութեամբ, թուրք-ուսուական համարաբարութեան թատերաբեմ պիտի դառնար 1914-ին: Սարաֆեանի հետազոտութիւնները մաս կը կազմեն Ի. դարու սկզբնաւորութեան Վանի շրջանի իրադարձութիւնները ուսումնասիրող աւելի լայն աշխատանքի մը:

Սարաֆեան մեծ կարեւորութիւն կ'ընծայէ արեւելեան թուրքիոյ ժողովրդագրութեան՝ ուշ օսմանեան պատմութիւնն ու արդի Հայաստանի առաջին շրջանը հասկնալու համար: Ասիկա բուռն վիճաբանութեան ոլորտ մըն է, տրուած ըլլալով արխիւներու սահմանափակ մատչելիութիւնը, իսկ Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգներուն ժողովրդագրութեան ու աշխարհագրութեան հագուազիւտ ուսումնասիրութիւնները բազմաթիւ անճշտութիւններ կը

պարունակեն: Արձէշի պարագային, Սարաֆեան հիմնուած է ուսուցիչներու արեւելեան հետախուզութեան սպայ Մայեւսկիի ուսումնասիրութեան վրայ: Ան գիտութեան նպատակներով Վանի եւ Պիթլիսի բնակչութեան ու քաղաքական աշխարհագրութեան համակարգուած ուսումնասիրութիւն մը կատարած է: Անոր մանրակրկիտ ուսումնասիրութիւնները կը յիշեն այցելած գիւղերուն, ինչպէս եւ այլ քարտէսներու մէջ գտածներուն անունները, եւ բնակչութիւնը բաժնած են ըստ ազգային պատկանելիութեան եւ նոյնիսկ ցեղախմբային կապերու: Ասիկա կարեւոր է, որովհետեւ համանման օսմանեան ժողովրդագրական քարտէսները չեն զանազաներ մուտնումանական համայնքներու էթնիկ բաղադրութիւնը, որոնք ենթադրաբար միասնական իսլամական համայնք մը (Ummet) կը կազմէին: Ըստ Մայեւսկիի հարցախոյզին, Արձէշի հայերը, որոնք բնակչութեան շուրջ 17 առ հարիւրը կը կազմէին, փոքրամասնութիւն էին մահմետական բնակչութեան մէջ (քիւրտեր՝ 61 առ հարիւր, թուրքեր՝ 22 առ հարիւր): Ըստ Սարաֆեանի, նման ժողովրդագրական հարցախոյզներու քննութիւնը թոյլ կու տայ տարբեր ընկերային խումբերու դիրքորոշումը ճշդել՝ պետութեան եւ իրարու հանդէպ:

Վանի շրջանի նկարագրութիւնները քիւրտերը կը բնորոշեն իբրեւ հովիւներ, իսկ հայերու մեծամասնութիւնը՝ իբրեւ գիւղացիներ. շրջանի քիւրտերը մինչեւ այսօր արաբերէն ֆելլաւ (եգիւղացի) բառը կը գործածեն հայերը բնորոշելու համար: Առեւտրական դասն ալ հայերէն բաղադրած էր, մինչդեռ վարչական դասը թուրքեր էին: Քիւրտերը ցեղախմբային բաղադրութիւն մը ունէին, ուր իւրաքանչիւր ցեղախումբ պետութեան եւ այլ ցեղախումբերու հետ տարբեր յարաբերութիւններ կը վարէր: Վաչկատուն խումբերու (ընդհանրապէս՝ քիւրտ) եւ նստակեաց բնակչութեան միջեւ լարուածութիւն կար: Եթէ դիտուի մարքսեան դիտանկիւնէ մը, այս լարուածութիւնը կրնայ վերագրուիլ բնապահական-տնտեսական վէճերու, աւելի քան էթնիկ կամ կրօնական: Օրինակ՝ երաշտի եւ սովի շրջաններուն, վաչկատուն քիւրտերը իրենց հօտերուն մէկ կարեւոր մասը կը կորսնցնէին, իսկ նստակեաց հայերը՝ իրենց հունձքը: Սակայն, հայերը կրնային շատ աւելի արագ վերականգնել իրենց կորուստները, քան քիւրտերը, որոնք աւելի հակամէտ էին մնալուն վնասներ կրելու, ինչ որ

հայերու հետ հակամարտութեան սերմերը ցանկու դուռ կը բանար: Այդուհանդերձ, փոխարաբերութիւնները այդքան լարուած չէին, դրական գոյակցութեան ու առեւտուրի ժամանակաշրջաններ եղած են երկու խմբաւորումներուն միջեւ:

Ա-Դօ (Յովհաննէս Մարտիրոսեան) Վան ուղարկուած էր 1914-1916-ի իրադարձութիւններուն մասին տեղեկագիր մը կազմելու նպատակով: Անոր գործը աղբիւրագիտական եզակի արժէք ունի՝ այս շրջանի բրտութեան հետազոտութեան համար, քանի որ Ա-Դօ բազմաթիւ աղբիւրներ օգտագործած է, ներառեալ՝ պատմաբանի վկայութիւններ, Վանի ապստամբութեան նախադրեալներուն համապարփակ ուսումնասիրութեան համար:

Սարաֆեան բացատրեց, որ վերջերս յուշագրութիւններու նոր շարք մը հրատարակուած է Հայաստանի մէջ՝ Հայոց Յեղասպանութեան մասին: Այս պատմաբանի վկայութիւնները կոկկասի տարբեր կողմեր սփռուած վերապրող-զաղթականներէ հաւաքուած էին 1916-ին: Առաջին հատորը ամբողջ

բնոյթը, որ կը հակադրուի մարդասպաններու աննպատակ հորդայի մը գործին: Կիներն ու մանուկները ընդհանրապէս չսպանուեցան, այլ անոնց ապահովութիւնը եւ ուսուցիչը նոյնիսկ երաշխաւորուեցաւ, ինչ որ վերագրաւ մարմիններու թելադրանքը կը մատնէ: Երկրորդ՝ գլխաւոր սպանողները թալանողները չէին. աւելի ուշ, պետութիւնը քիւրտ տարբեր բերած էր՝ գիւղեր կողոպտելու եւ այրելու համար: Թէեւ հայեր փրկող տեղացի քիւրտերու դէպքեր եղած են, սովորական պատմամը կը նկարագրէ հայկական գիւղերու քանդումը ամբողջի մը կողմէ: Ուրիշ պատմամներ կը նկարագրեն թէ ինչպէս երիտասարդներու հրահանգ տրուած է հաւաքուիլ ու յանձնել իրենց գէնքերը Վանի նահանգի այլ վայրերու մէջ, ուրեմն՝ Արձէշի սպանութիւնները ամենայն հաւանականութեամբ հայերը ջարդելու լայն ծրագրի մը մաս կը կազմէին: Վանի քաղաքը ինքնապաշտպանութեան լայն գործողութիւն մը կազմակերպեց, բայց Արձէշի հայերը նման ծրագրեր չունէին, այլ աւելի հակած էին կոկկաս փախչելու ըստ կարելոյն:



Արձէշի վանքը

ջութեամբ Վանի նահանգի մասին է, ներառեալ՝ Արձէշ: Ան նշեց, որ սկզբնապէս Արձէշի հետազոտութեան ձեռնարկած էր՝ Ա-Դոյի գործին անկախ գնահատումի մը համար: Այս գործը, աւելցուց, հիմնովին դիմագրաւած էր նման խստապահանջ քննութիւն մը:

Սարաֆեան յայտնեց, թէ տրամադրելի տուեալներով կարելի է քննական պատում մը ներկայացնել Արձէշի մէջ պատահածին մասին: Ջարդերը սկսած էին 19 Ապրիլ 1915-ին: Ըստ վկայութիւններուն, այդ թուականէն առաջ հայկական գիւնեալ գործունէութեան փաստ չկայ. Արձէշի հայերը հնազանդած էին, վստահելով քայմաքամ Ռիզա Պէյին, եւ վերահաս ջարդ մը չէին ակնկալել: Սակայն, անոնք մեթոտական ձեւով առանձնացուեցան, օղակի մէջ առնուեցան ու սպանուեցան երկու օրուան ընթացքին: 19 Ապրիլին, Ռիզա պէյ հայ տղամարդիկը կանջած էր իր գրասենեակը՝ ենթադրաբար գիտութեան համար: Անոնք հոն ձերբակալուած, կապուած ու սպաննուած էին: Ոստիկանները գործադրած էին համակարգուած սպանութիւններ՝ յայտնապէս կեդրոնական հեղինակութեան մը թելադրանքով: Արձէշ սպաննուածներուն թիւը մօտաւորապէս 2,500-ի կը հասնի:

Այս ջարդերուն կարգ մը յատկանիշերը կրկին կը մատնանշեն ոճիրին կազմակերպուած

Բացայայտ կը դառնայ, որ օսմանեան պետութիւնը Վանի շրջանի հայկական համայնքները կործանելու նպատակը կը հետապնդէր:

Սարաֆեան տեղադրեց Արձէշի իր ուսումնասիրութիւնը հայագիտութեան ընդհանուր ծիրին մէջ: Դասախօսութեան ընթացքին, ան կալուածը բնորոշեց իբրեւ «կարկտան», դիտել տալով, որ հակառակ առատ սկզբնաղբիւրներու գոյութեան, անոնց քննութիւնը կը պակսի, եւ յայտնեց, թէ Հայոց Յեղասպանութեան եւ ուշ օսմանեան պատմութեան յատուկ դրուագներու նման մանրամասն վերլուծումներ թոյլ կու տան, որ արդի հայոց պատմութեան աւելի կատարեալ պատկեր մը երեւան գայ: Սարաֆեան քննադատեց չափազանցուած «ենթադրութիւններ»ու առկայութիւնը այս կալուածին մէջ, որոնք կը փոխարինեն հետազոտութեամբ եւ փաստական նիւթերով պատասխաններ գտնելու պատմագրական ճիշդ աւանդութիւնը: Ան պնդեց, թէ տակաւին արդի հայոց պատմութեան շատ երեւոյթներու մասին գրուած չէ, որովհետեւ էսթապլիշմենթի պատմաբաններէ աւելին չակնկալուիր: Սարաֆեանի աչքին, յատուկ պարագաներու մանրամասն հետազոտութիւնները վստահելի պատմագրութեան հիմքին մաս կը կազմեն:

ԳԻԻՄՐԻՈՒՄ ՅԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ԵՐԱԺԻՇՏՆԵՐՆ ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱՆ ՅԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐՈՎ



Գիւմրու ազգային զեղարկատական կեդրոնում Մայիսի 10-ին համատեղ համերգային ծրագրով ելոյթ ունեցան հայ եւ թուրք երաժիշտները: Նիդա Աթեշը եւ Սուրէն Ասատրեանը միասին նախ հնչեցրին «Դէլ Եամանը», ապա նաեւ անատոլիական, էրզրումի թուրքական եւ հայկական մեղեդիներ: Համերգին նրանց միացել էին էմրե Այը (թուրքիա) եւ Գէորգ Խաչատրեանը (Հայաստան):

Ստամբուլում ծնուած եւ մեծացած Նիդա Աթեշը սովորել է իզմիրում: Այժմ բնակուում է Բուրսայում: «Արմենպրես»-ի հետ գրոյցի ժամանակ թուրք երաժիշտն անկեղծանում է՝ հօր շնորհիւ մանկուց երաժշտութեան մէջ է եղել ու արդէն 25 տարի է պրոֆեսիոնալ երաժշտութեամբ է զբաղուում: Երաժշտութեան հիմնական ուղղութիւնը Անատոլիայի ազգային մեղեդիներն են, երաժշտական հիմնական գործիքը թուրքիայում յայտնի բաղլաման է՝ հայկական սազը, որն իր ակորդային համակարգով անատոլիական երաժշտութեան հիմնական գործիքն է: «Լեզուական դժուարութիւն չունենք: Նախ՝ Սուրէն Ասատրեանը աւելի քան 20 տարի պարբերաբար թուրքիա գալիս է եւ լաւ տիրապետում է

թուրքերէնին, բայց, նոյնիսկ եթէ չտիրապետէր, մենք միմիանց շատ լաւ կը հասկանայինք՝ երաժշտութեան լեզուով ենք խօսում: Երբ նստում ենք միմիանց հետ, առանց մի բառ իսկ ասելու մենք նուազում ենք միասին, քանի որ երաժշտութեան նոյն աղբիւրից ենք սնուում, եւ սա լաւ շփման լեզու է մեզ համար: Երաժշտութիւնը ազատութիւն է, որը բոլորը հասկանում են», -նշեց Նիդա Աթեշը: Նիդա Աթեշի եւ Սուրէն Ասատրեանի համագործակցութիւնը նոր է, նրանք արդէն 5 համատեղ համերգ են ունեցել Ստամբուլում: «Դուրուկի եւ սազի համանուագով շատ զեղեցիկ ժողովրդական մեղեդիներ են ստացուում, որոնք ժողովուրդը սիրում է: Երաժշտութեանը լեզուն հասկանալի է բոլորին», - «Արմենպրես»-ին ասաց Սուրէն Ասատրեանը: Համերգը Եւրամիուլթիւն «Աջակցութիւն Հայաստանի-թուրքիա կարգաւորման գործընթացին» ծրագրի շրջանակում կազմակերպել էին Անադոլու Քիւլթուր/Anadolu Kultur/ եւ Նիւլուֆերի քաղաքապետարանը: Մայիսի 11-ին երաժիշտները ելոյթ կ'ունենան նաեւ Երեւանի «Նորարար փորձառական արուեստի կեդրոն»-ում (ՆՓԱԿ):

« ՅԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇԱԲԱԹ » ԹՈԿԻՈՅՈՒՄ

Մայիսի 9-ից 14-ը ձապոնիայի մայրաքաղաք Թոկիոյում կայացաւ արդէն աւանդական դարձած ամենամեծ «Հայկական մշակույթի շաբաթ» միջոցառումը, որն այս տարի նուիրուած էր Հայաստանի Հանրապետութեան եւ ձապոնիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 25-ամեակին: Մշակութային շաբաթը կազմակերպուել էր ձապոնիայում ՀՀ դեսպանութեան կողմից՝ ՀՀ մշակույթի նախարարութեան աջակցութեամբ:

Մշակութային շաբաթուայ ընթացքում տեղի ունեցան հայ եւ ձապոնացի անուանի նկարիչների ցուցահանդէսներ, հայկական երաժշտութեան երեկոյ, հայկական ու ձապոնական աւանդական երաժշտական գործիքների կատարումներով համեմուած համերգներ, դասախոսութիւններ, մշակութային այլ միջոցառումներ:

Ներկայացվեց «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի «Արարատը հայի աչքերով» խորագրով

լուսանկարչական ցուցահանդէսը, որն արդէն մեծ յաջողութեամբ ցուցադրուել էր Հայաստանում եւ Արցախում: Յուզադրուեցին նաեւ յայտնի արուեստի գործիչներ՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Վլադիմիր Մարգարեանի (Վալմար), ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հովհիսիմէ Սիմոնյանի, Սրբուհի Աբաջեանի, Դեյնա Վոլրաֆի, Ժանսեմի, ձապոնիայի նկարիչների ընկերութեան անդամների աշխատանքները:

Մայիսի 10-ին տեղի ունեցաւ «Հայաստանի իւրօրինակ արտադրանքը» խորագրով դասախոսութիւնը, ինչպէս նաեւ «Հայկական երաժշտութեան երեկոյ» երաժշտական միջոցառումը, որին մասնակցեցին նաեւ «ձապոնիայի կոմիտասի անուան երաժշտական ընկերութեան» հոգաբարձուների խորհրդի նախագահ Տակահիրո Ակիբան, Հայաստանից ժամանած քանոնահար Մերի Մուսիւնեանը, հանրայայտ սուպրանո Արաքս Մանսուրեանը:

Շար.ը էջ 19

ՎԱՐՇԱՈՒՎՅՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԼԵՅԱՍՏԱՆԻ ՅԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՄԱԺՈՂՈՎԸ



Մայիսի 8-ին Վարշաւայի Գիւղատնտեսութեան ազգային գրադարանի մեծ դահլիճում տեղի է ունեցել Լեհաստանի հայերի երկրորդ համաժողովը: Համաժողովի կազմակերպիչներն են ՀՀ սփիւռքի նախարարութիւնը եւ Լեհաստանում ՀՀ դեսպանութիւնը:

Համաժողովի գործընկերներ են Լեհահայոց մշակութային ժառանգութեան հիմնադրամը, Կրակովի հայկական մշակութային ընկերակցութիւնը, Լեհ-հայկական հիմնադրամը, Լեհաստանի Հայկական հիմնադրամը, Վրոցլավի Լեհաստանի հայերի միութիւնը, Հայ լեհական կապերի զարգացման կեդրոնը, Հայ Դատի Լեհաստանի գրասենեակը, Հայ-լեհական հասարակական կոմիտէն, Գլիվիցի Յուզեֆ Թեոֆորովիչի անուան հայկական համայնքը, Լեհ-հայկական առեւտրադիւնաբերական պալատը, Հայ-լեհական համագործակցութեան կազմակերպութիւնը, «Զուլիայի Սկիւռիկներ» բարեգործական հիմնադրամը, Լեհաստանի մի շարք քաղաքների համայնքային կազմակերպութիւնները: Լեհաստանի հայերի առաջին համաժողովը տեղի է ունեցել 2016 թուականի Մայիսի 8ին:

Համաժողովը մեկնարկել է Լեհաստանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան պետական օրհներգերով: Համաժողովին իր ուղերձն էր չղել Լեհաստանի Սեյմի նախագահ՝ մարշալեկ Մարեկ Կուխչինսկին: Համաժողովին ներկայ էր ԼՀ Սենատի անդամ Յան Մարիա Յակովսկին, նա համաժողովի մասնակիցներին է փոխանցել ԼՀ Սենատի նախագահ Մարշալեկ Ստանիսլաւ Կարչեսկու ողջոյնը:

Համաժողովի բացման պաշտօնական արարողութեան ժամանակ ելոյթներով հանդէս են եկել ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարեանը եւ ԼՀ կառավարութեան Ազգային ու էթնիկ փոքրամասնութիւնների համատեղ յանձնաժողովում հայ փոքրամասնութեան ներկայացուցիչ Էդուարդ Միեր-Ենդժեյովիչը:

Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել թեմատիկ քննարկումներ: Լեհաստանի հայ համայնքի կազմակերպմանը եւ համայնքի կեանքին վերաբերող թեմատիկ քննարկումը վարել է Էդուարդ Միեր-Ենդժեյովիչը, բանախօսներն են եղել Լեհահայոց մշակութային ժառանգութեան հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչը, Հայ Կաթողիկէ Եկեղեցու Վարչաուպի եւ կեդրոնական Լեհաստանի հոգեւոր հովիւ Յուզեֆ

Նաումովիչը, Գլիվիցի Յուզեֆ Թեոֆորովիչի անուան հայ համայնքի ներկայացուցիչ Բոգդան Կասարովիչը եւ Լեհ-հայկական հիմնադրամի նախագահ Արսէն Յովսէփեանը:

Համաժողովի ամփոփիչ քննարկման թեման վերաբերել է հայապահպանութեան խնդիրներին: Նիստը վարել է Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարեանը, հիմնական զեկուցողներն են եղել ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, Հայ Առաքելական Եկեղեցու Լեհահայոց հոգեւոր հովիւ Տաճատ Վարդապետ Մատուրեանը եւ Կրակովի հայկական դպրոցի տնօրէն Գոհար Խաչատրեանը:

Իր ելոյթում նախարար Հրանուշ Յակոբեանը մանրամասն ներկայացրել է Սփիւռքի հետ տարուող աշխատանքներում Հայաստանի որդեգրած քաղաքականութիւնը, ներկայացրել է հայկական սփիւռքի կառուցուածքը, անդրադարձ կատարել Լեհաստանի հայ համայնքին: Նախարարը ներկայացրել է համահայկական նշանակութիւն ունեցող խնդիրները, ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերը, նոր նախաձեռնութիւնները՝ կարեւորելով Լեհաստանի հայկական կազմակերպութիւնների եւ հայ համայնքի ակտիւ մասնակցութիւնը:

Համաժողովի ընթացքում Սփիւռքի նախարարը անհատական հանդիպումներ է ունեցել Լեհաստանի հայ համայնքի ակտիւ գործիչների, հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ՝ ծանօթանալով նրանց գործունէութեանը պատասխանելով նրանց յուզող հարցերին:

Համաժողովի շրջանակներում Վարշաւայի Գիւղատնտեսութեան Ազգային գրադարանի ճեմասրահում կազմակերպուել է Լեհաստանում բնակուող հայազգի զեղանկարիչ Գրիգոր Ասլանեանի նկարների ցուցահանդէսը եւ Սպանիայում բնակուող հայազգի գործիչ Արարատ Ղուկասեանի «Փնտուտուների ճանապարհին» բանաստեղծութիւնների ժողովածուի շնորհանդէսը:

2017 թուականի Մայիսի 9-ին ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը ծաղիկներ է դրել Վարշաւայում գտնուող Հայրենական Մեծ պատերազմում զոհուածների յուշահամալիրում: Նախարարը աշխատանքային հանդիպումներ է ունեցել Լեհահայոց մշակութային ժառանգութեան հիմնադրամում եւ «Զուլիայի սկիւռիկներ» բարեգործական կազմակերպութեան գրասենեակում:

ՇՈՒՏ ՅՈՒՆԵՍԿՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Միայն քունի պակասը չէ, որ կը վատնէ ձեր ուժը: Նոյնիսկ աննշան գործողութիւնները կրնան հիւսիսէ ձեզ թէ՛ մարմնապէս, թէ՛ մտովի:

Գիտնականներու կարծիքով՝ կան շարք մը վատ սովորութիւններ, որոնք կը յոգնեցնեն ձեզ: Անոնք ներկայացուցած են ապրելակերպի քանի մը փոփոխութիւն, որոնք կրնան վերականգնել ձեր ուժերը:

Յոգնած ժամանակ մի՛ խուսափիք մարմնամարզութենէն: Ձեր ուժը խնայելու համար մարմնամարզութիւն ըրէ՛ք: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ նստակեաց կեանքով ապրող առողջ չափահասները, որոնք սկսած են շաբաթը երեք օր ընդամենը 20 վայրկեան մարմնամարզութեամբ զբաղիլ, վեց շաբաթ ետք աւելի քիչ յոգնութիւն զգացած են:

Կանոնաւոր վարժութիւնները կը բարելաւեն սրտանօթային համակարգի աշխատանքը, թթուածին եւ սննդարար նիւթեր կը փոխանցեն ձեր հիւսկէններուն:

Բաւականաչափ ջուր չիւմելը նոյնպէս կ'ազդէ ձեր ուժին վրայ: Զրագրկումը կը տանի արեան քանակի նուազումին, որ կը խտացնէ արիւնը: Անիկա սրտին կը ստիպէ նուազ արդիւնաւէտօրէն աշխատիլ՝ դանդաղեցնելով արագութիւնը, որ անհրաժեշտ է գործարաններուն եւ մկաններուն թթուածին ու սննդարար նիւթեր մատակարարելու համար:

ԴԵՄՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՆՈՂ ՎԱՐժՈՒԹԻՒՆՆԵՐ

Որպէսզի պահպանուի մորթին առաձգականութիւնը եւ կանխուի կնճիւղներու յառաջացումը, բաւարար չէ օգտուիլ քստկներէն, դիմակներ դնել եւ օգտագործել այլ միջոցներ:

Դէմքին համար նախատեսուած պարզ վարժութիւնները մորթի ձեր ամէնօրեայ խնամքը կը դարձնեն շատ աւելի արդիւնաւէտ:

Իսկ ժամանակ եւ ջանքեր այդ վարժութիւնները շատ չեն պահանջեր: Աւելին՝ անոնք կատարել կարելի է իւրաքանչիւր պահ. տնային աշխատանք կատարելու ժամանակ, հեռատեսիլի ծրագրեր դիտելու ընթացքին եւ նոյնիսկ՝ գործատեղիին մէջ:

Ինչպէ՞ս սկսիլ դէմքի համար վարժութիւնները: Դէմքի մարզանքը սկսելէն առաջ փափաքելի է մորթին քսել իւղոտ քսուք եւ թեթեւ մերսում կատարել. մատներու ծայրերով թեթեւ կը հարուածենք ճակատը, այտերն ու քիթը:

Իւրաքանչիւր վարժութիւն անհրաժեշտ է կրկնել 5-10 անգամ: Վարժութիւններու կատարման ժամանակ 5 երկվայրկեան լարեցէք դէմքի մկանները, իսկ այնուհետեւ թուլցուցէք:

Երբ աւարտէք դէմքի մարզանքը, պէտք է լուացուիլ գաղջ, նոր պատրաստուած թէյով: Նախընտրելի է կանաչ թէյը, սակայն կարելի է օգտագործել նաեւ սեւը, սակայն այդ պարագային անիկա շատ թուղ պէտք չէ ըլլայ: Լուացուելու համար կարելի է օգտագործել նաեւ բուստիչ խտաբոյսերու-

Մեծ է դերը նաեւ երկաթին: Երկաթի պակասը կը ստիպէ մարդուն ջղայնանալ, թոյլ զգալ եւ կորսնցնել կեղրոնանալու կարողութիւնը: Դուք կը յոգնիք, քանի որ ձեր մկաններն ու օրկանները բաւականաչափ թթուածին չեն ստանար: Ձեր ճաշացանկին աւելցուցէք երկաթով հարուստ ուտելիք, որպէսզի կանխարգիլէք անեմիան, սնունդի մէջ ընդգրկեցէք հորթի միս, լուբիա, հաւկիթ, գոց կանաչ բանջարեղէն, ընկուզեղէն, խնձոր, գետնանուշի կարագ եւ այլն: Նաեւ կերէ՛ք մեծ քանակութեամբ C կենսասնիւթ պարունակող ուտելիքներ՝ քիուրի, բնական հիւթեր եւ այլն:

Կատարել ըլլալու ցանկութիւնը նոյնպէս ձեզ կը ստիպէ աւելի տքնաջան եւ երկար աշխատիլ, քան անհրաժեշտ է: Գիտնականներու կարծիքով՝ պէտք է յատուկ ժամեր սահմանուին ձեր ծրագրերուն համար: Հրաժարեցէ՛ք լուս փիղ դարձնելու սովորութենէն:

Լարուածութիւնը կրնայ ձեզ կաթուածահար ընել եւ ստիպել յոգնիլ մտովի: Այս ամէնէն ազատելու համար անհրաժեշտ է զբաղիլ մարմնամարզութեամբ, մտախոհութեամբ (meditation). ընկերոջ հետ բաժնեցէ՛ք ձեր անհանգստութիւնները եւ փորձեցէ՛ք աւելի իրատես ըլլալ: Անպայման նախաճաշեցէ՛ք: Մի աշխատիք արձակուրդի մէջ եղած ժամանակ, իսկ քնանալու ժամերուն մի ստուգէ՛ք ձեր ելեկտրոնային նամակները:

Թուրմ:

Օրական ընդամենը 5-7 վայրկեան, եւ դուք որոշ ժամանակ անց պիտի տեսնէք, թէ դէպի լաւը որքան փոխուած է ձեր դէմքը:

Վարժութիւններ դէմքի համար

1. Արտաբերէ՛ք «Օ» հնչիւնը՝ կլորցնելով շրթունքը: Այս վարժութիւնը կատարելու ժամանակ աշխատեցէ՛ք շատ լարել շրթունքի մկանները:

2. Լայն բանալով բերանը, աշխատեցէ՛ք քանի մը անգամ յօրանջել:

3. Փակեցէ՛ք աչքերը եւ գանոնք ուղղեցէ՛ք դէպի աջ, այնուհետեւ՝ ձախ եւ կատարեցէ՛ք շրջանաձեւ շարժումներ:

4. Մատներով բռնելով բերանի անկիւնները քաշեցէ՛ք վարի շրթունքը եւ լարեցէ՛ք կզակը: Հետեւեցէ՛ք, որ այս վարժութիւնը կատարելու ժամանակ բերանի անկիւնները չկախուին:

5. Շրթունքներով խողովակ շինեցէ՛ք եւ ջանադրաբար արտաբերեցէ՛ք «ու» հնչիւնը: Այս վարժութեան ժամանակ շրթունքները պէտք է լարուած ըլլան:

6. Հերթականութեամբ կարելի եղածին չափ շատ լեցնելով այտերը փչեցէ՛ք եւ օդը հանեցէ՛ք:

7. Աշխատեցէ՛ք վարի շրթունքը քաշել դէպի քիթին ծայրը՝ փորձելով հասնիլ անոր:

8. Աշխատեցէ՛ք փակել աչքերը, բաց միտամանակ բուրբուկ եւ ցուցամատով պահեցէ՛ք կողերը՝ չձգելով, որ անոնք փակուին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 35 ՏԱՐԵԿԱՆԸ ԱՆՑԱԾ ԿԻՆԵՐՈՒ

1. Որքան ալ երեկոյթը հետաքրքրական ըլլայ եւ երկարատեւ, ամէն ինչ ըրէ՛ք, որ արթնաք ձեր սեփական ննջարանին մէջ:

2. Խմորեղէնի եւ խնձորի միջեւ ընտրութիւնը կատարեցէ՛ք ջուրի օգտին:

3. Եթէ ժամացոյցին սլաքները ցոյց կու տան կէս գիշերը, իսկ դուք դեռ պէտք է ձեր գլուխը լուսաք, ոտքերու մազահեռացումը կատարէ՛ք եւ եղունգներ ներկէ՛ք, միշտ ընտրեցէ՛ք բուրբ, որովհետեւ ամէն ինչ կարելի է ուղղել, սակայն ոչ ոք եւ ոչինչ կրնայ քողարկել ձեր յոգնած, ճմռթուած դէմքը եւ անտանելի տրամադրութիւնը:

4. Ծամբորդեցէ՛ք: Օգտագործեցէ՛ք ճամբորդելու իւրաքանչիւր հնարաւորութիւն: Նոր տպաւորութիւնները առանց ծերանալու նոր փորձ ձեռք բերելու հնարաւորութիւն են:

5. Իրավիճակը գնահատելէ առաջ դուք ձեզի հարց տուէ՛ք.

ՆՈՒՌԻ 7 ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նուռի օգտակար յատկութիւններուն մասին առասպելներ կը պատմուին: Կ'ըսուի, որ եթէ պարբերաբար նուռ ուտէ՛ք, ձեր սիրտը կ'աշխատի ժամացոյցի նման, իսկ ծերութիւնը ձեզի կը հասնի շատ աւելի ուշ, քան դուք կը սպասէիք:

Նուռը կը պարունակէ 12 ամինաթթուներ, որոնց 5-ը անփոխարինելի են: Այսինքն դուք գանոնք չէ՛ք գտներ այլ պտուղներու մէջ: Նուռը նաեւ հարուստ է K, C, B9 եւ B6 կենսասնիւթերով, ինչպէս նաեւ հանքանիւթերով՝ ֆոսֆորով եւ կալիումով: Ասոնց հետ մէկտեղ նուռը ցած ջերմութ ունեցող պտուղ է:

Նուռի 7 օգտակար յատկութիւնները.

1. Նուռը կ'ամրապնդէ սիրտը: Նուռը կը պարունակէ պունիկալազին ու մեծ քանակով հակաթոյներ, որոնք մտնելով մարմնի մէջ կ'ամրապնդեն սիրտը: Մասնագէտներու խօսքով, պունիկալազինը եւ հակաթոյները կ'ամրացնեն երակներուն պատերը եւ կ'իջեցնեն վատ քոլեսթերոլի մակարդակը:

2. Նուռը կը պաշտպանէ քաղցկեղէն: Նուռը կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կը խոչընդոտեն չարորակ գոյացութիւններու ձեւաւորումը: Նուռին մէջ գտնուող հակաթթուները եւ հակաբորբոքային նիւթերը թոյլ չեն տար զարգացումը չարորակ գոյացութիւններու բշիջներուն: Հետեւաբար քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը կը նուազի:

3. Նուռը կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը: 100 կրամ նուռը կը պարունակէ 21 տոկոս C կենսասնիւթ, որ մարմնին անհրաժեշտ է մէկ օրուան ընթացքին: Նուռը կ'աշխուժացնէ դիմադրողական համակարգը՝ պաշտպանելով մարմինը տարատեսակ վարակներից: Մասնագէտները կը նշեն, որ օրը մէկ նուռի 6-րդ մասը ուտելու պարագային՝ դիմադրողականութիւնը կը բարձրանայ 3 անգամ:

4. Նուռը կը բարելաւէ մարսողութիւնը: Մննդային հիւսուածքները (fiber), որոնք կը պարունակէ նուռը, այնպիսի տարրեր են, որոնք մարմինը չի մարսեր: Փոխարէնը այդ հիւսուածքները կ'օգնեն չէզոքացնելու ճաշի «անպէտք մնացորդները»: 100 կրամ նուռը կը պարունակէ 16 կրամ սննդային

«արդեօ՞ք այս գործը իմս է», ապա փակեցէ՛ք ձեր բերանը եւ գացէ՛ք աշխատելու:

6. Ձեր ժամանակն ու ջիղերը ոչ ճիշդ մարդու վրայ կարելի է վատնել միայն մէկ պարագայի, եթէ դուք բժիշկ էք, իսկ այդ մարդը՝ ձեզի բաւական լաւ վճարող հիւանդ:

7. Բուռն սիրովէպի եւ գումար շահելու հնարաւորութեան միջեւ ընտրեցէ՛ք երկրորդը:

8. Վէճի ընթացքին ոչ թէ կը ծնի ճշմարտութիւնը, այլ՝ միկրեներ: Ժամանակին արտասանուած՝ «ինչպէս դուս կ'ըսես» արտայայտութիւնը կը խնայէ ձեր ջիղերն ու ժամանակը:

9. Առանձնութեան մէջ անցուցած օրերը աւելի լուրջ արդիւնք կրնան տալ, քան մերսման սրահ յաճախելը:

10. Ոչ մէկ տղամարդ արժանի է, որ դուք տանջուիք անյարմար կօշիկներու մէջ:



հիւսուածք, որ մարմնին անհրաժեշտ չափաբաժնի ծիրին մէջ է: «Աւելորդութիւններ»-էն ազատիլը կը նպաստէ մարսողութեան համակարգին:

5. Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Հեմոկլոպինը երկաթ պարունակող սպիտակուց է, որ կ'օգնէ մարմնին թթուածինը հասցնելու հիւսկէններուն: Եթէ հեմոկլոպինի մակարդակը ցած է մարդու մօտ՝ սրտխառնուք, գլխապտոյտ եւ թուլութիւն կը նկատուի: Նուռը կը բարձրացնէ հեմոկլոպինի մակարդակը: Անիկա յաճախ խորհուրդ կու տան օգտագործել անեմիայի պարագային: Օրը երեք գաւաթ նուռի հիւթը բաւարար է հեմոկլոպինը կարգաւորելու համար:

6. Նուռը կը կանխարգիլէ մազաթափութիւնը: Մազաթափութեան պատճառներէն մէկն ալ երկաթի պակասի հետեւանքով յառաջացող անեմիան է: Հեմոկլոպինի պակասի հետեւանքով մարմնի հիւսկէնները բաւարար քանակով թթուածին չեն ստանար: Պարբերաբար նուռ օգտագործելու պարագային կ'ամրապնդուին մազի արմատները, կը կարգաւորուի սնուցումը եւ հետզհետէ կը վերանայ մազաթափութիւնը:

7. Նուռը կը կանխարգիլէ արթորոզի յառաջացումը: Արթորոզ տարածուած յօդային հիւանդութիւն է, որու պատճառով կը տառապի աշխարհի բնակչութեան 10 տոկոսը: Արթորոզի հետեւանքով կը բորբոքին յենաշարժական հատուածները եւ կը յառաջանան շարժելու բարդութիւններ: Նուռը կը պարունակէ մեծ քանակով K կենսասնիւթ, որ ունի հակաբորբոքային ներուժ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain www.syrianarmenianrelieffund.org

ԻՆՉ ՊԱՏԱՐԵՑԱՒ ԱՐՃԵՇԻ ՀԱՅԵՐՈՒՆ 1915-ԻՆ

Շարունակուած էջ 8-էն

Դասախօսութեան յաջորդած հարց ու պատասխանի բաժնին ընթացքին, Սարաֆեան ափսոսաց, որ արխիւները հաւասարապէս բաց չեն բոլոր գիտնականներուն առջեւ: Քաղաքական շահեր հետապնդող հաստատութիւններու արխիւները կա՛մ գաղտնի կը պահեն նիւթերու կարեւոր բաժին մը եւ կա՛մ միայն մուտքը կ'արտօնեն այն գիտնականներուն, որոնք իրենց հաւաքած նիւթերը անոնց ի նպաստ պիտի գործածեն: Ասիկա կը հաստատէ մատչելիութեան նուիրապետութիւն մը, որով կարգ մը գիտնականներ տարբեր տեսակէտներ ունեցող գիտնականներու պնդումներն ու գործը ստուգելու եւ քննադատելու անկարելիութեան առջեւ կը գտնուին: Այսպէսով, դրական մտածողութեամբ պատմաբաններու առջեւ պատնէշ մը կը ստեղծուի, որպէսզի պատմութեան արդար վերլուծումի ու նկարագրութեան իրենց նպատակը կարենան իրագործել՝ ի տարբերութիւն քաղաքական նպատակներով պատմութեան օգտագործումին, որ նկատելի է թէ՛ հայկական ժողովրդապաշտ հրատարակութիւններու եւ թէ՛ ժխտողական ճամբարին մէջ:

Պրն. Սարաֆեան աւելի խորացաւ թրքական ժխտողական պատմագրութեան եւ 1915-ին հայերը իբրեւ ապստամբ ներկայացնելու անոր հետեւողական միտումին մէջ: Այս բնորոշումը յաճախ կը գործածուի հայոց զանգուածային սպանութիւնն ու տեղահանութիւնը արդարացնելու համար իբրեւ անկայունութիւնը չէզոքացնելու եւ ուսական շրջափակումի սպառնալիքին հակադարձելու միջոց: Սակայն, այս փաստարկը անտրամաբանական է եւ շօշափելի պատմական ապացուցիչ գուրկ: Թուրք ազգայնական պատմաբանները՝ Հայոց Յեղասպանութիւնը ժխտողներ, կը խուսափին քննելէ հայերը ինքնապաշտպանութեան մղող համագիրը (context), ինչպէս եւ վանի բուն կռուի խորապէս ինքնապաշտպանական բնոյթը, ուր հայերը փակուած են քաղաքի թաղամասերու մէջ: Սարաֆեան անդրադարձաւ ճասթիւն Մաքթարթիի եւ երեք թուրք ժխտող պատմաբաններու համահեղինակած «Վանի հայկական ապստամբութիւնը» անգլերէն գիրքին, ուր հայերը կը ներկայացուին որպէս թէ՛ վանի շրջանի խռովարարներ 1912-էն ի վեր: Այս գիրքը, սակայն, 1915-ի իրադար-

ձութիւններուն, գիւղերու ջարդերուն եւ անոնց նախատուեալներուն չ'անդրադառնար: Ժխտողականներու գործը բանալի տեղեկութիւններ անտեսել է եւ ո՛չ թէ պատմագրութեան հետ հաշուի նստիլ: Էտուրտ էրիքսըն կը յիշուի իբրեւ ժխտողական խաղին նորեկ մը, որ հայկական խնդիրը կը դիտէ թրքական գիտնորակա-նութեան ակնոցով: Մինչ էրիքսըն Անգարայի օսմանեան գիտնորական արխիւներէն կը մէջբերէ, Սարաֆեանի պէս պատմաբան մը իրաւունք չունի այդ արխիւները մտնելու՝ էրիքսընի գործը քննելու համար: Միեւնոյն ձեւով, 1990-ականներուն, երբ կը քննէր ճասթիւն Մաքթարթիի գործը, Սարաֆեանին մերժուած էր Պոլսոյ վարչապետարանի արխիւներու մուտքը, ուր Մաքթարթիի աղբիւրները կը գտնուին: Միւս կողմէ, պրն. Սարաֆեանը կը նշէ, թէ հակառակ անոր, որ Հ. Յ. Դաշնակցութեան Պոստոնի արխիւներուն մէջ մասը տեսած է, չի մէջբերեր զանոնք իր գործին մէջ, որովհետեւ անոնց մուտքն ալ սահմանափակ կը մնայ: Ան ըսաւ, թէ կը հաւատայ, որ բոլոր գիտնականները պէտք է հաւասար մուտք ունենան բոլոր վաւերացողութիւններուն, նոյնիսկ՝ ցեղասպանութիւնը ժխտող թուրք պաշտօնական մտաւորականներ:

Պրն. Սարաֆեան ժխտողական պատմագրութեան ուրիշ օրինակ մը կը նկատէ Եուսուֆ Սարընայի գործը: Ապրիլ 24ի դէպքերուն նուիրուած գործի մը մէջ, Սարընայ պնդած է, որ Պոլիս ձերբակալուած մտաւորականները պետական հսկողութեան տակ պահուած էին մինչեւ ազատ արձակումը՝ կեղբոնանայով Այաշ զրկուած քաղաքական բանտարկեալներուն վրայ: Սարընայի աշխատութիւնը ամբողջութեամբ հիմնուած էր օսմանեան աղբիւրներու վրայ: Սակայն, Սարաֆեան հետազոտած էր Սարընայի պնդումները ու եզրակացուցած, որ շինծու են: Այնուհետեւ, ան Սարընային ուղղուած պատասխան մը հրատարակած էր եԱԿՍ» շաբաթաթերթին մէջ, բայց թուրք պատմաբանը նախընտրած էր չպատասխանել: Ժխտողական պատմաբանը չի զբաղիր փաստերու վրայ հիմնուած փաստարկներով, ուստի, կանխատեսելի էր, որ Սարընայ լուռ մնար:

Ներկաներէն մէկը հարցուց, թէ Արճէշի նման պարագայ մը ուսումնասիրելու նպատակով ոչ-հայկական աղբիւրներ գոյութիւն ունի՞ն: Պրն. Սարաֆեանը նշեց, թէ

ամերիկացի միսիոնարները գրած են վանի շրջանի դէպքերուն մասին, եւ աւելցուց, թէ կը կարծէ, որ նման բնոյթի ուսական պատմաներ կրնան պահպանուած ըլլալ գիտնորական արխիւներու մէջ ու կրնան օգտագործուիլ վանի շրջանի իրավիճակը լուսաբանելու համար: Սարաֆեան իր հրատարակութիւնը յայտնեց նիւթին մասին օսմանեան պիտանի աղբիւրներու բացակայութեան հանդէպ: Տրամադրելի միակ աղբիւրը՝ ըստ իր գիտութեան, գիտնորական արխիւներէն մատչելի պատու մըն է թուրք-քրտական գիւղի մը ջարդին մասին: Ան օրինակը տուաւ Տիարպէթիի մօտ կարծեցեալ ջարդի մը՝ 1915-ին: Խնդրոյ առարկայ գիւղը երթալով, տեղւոյն բնակիչները կտրուկ կերպով յայտարարած էին, թէ հոն իսլամներ ջարդուած չէին 1915-ին, այլ միայն հայեր: Արճէշի պարագային, ուսական բանակի ժամանումէն ետք, վկայութիւններ կան, թէ ուսներ ու քոզակներ (բայց ո՛չ հայեր) իսլամներու խանութներ կողոպտած

են: Թրքական ազգայնական խօսույթը այս զանազանութիւնը չ'ընէր: Ռուսական գրաւումի շրջանին դէպքերը արեւելեան թուրքիոյ մէջ տակաւին յատակ չեն եւ յաւելեալ հետազոտութեան կը կարօտին:

Պրն. Սարաֆեան իր դասախօսութիւնը աւարտեց, նշելով, թէ ուշ օսմանեան շրջանի ակադեմիական հետազոտութեան լաւագոյն նմուշներէն ոմանք թուրքիոյ գիտնականներէ կը բխին: Ան յիշեց քրտական ծագումով Եթիւան թիւրքերը մագը, որ նաեւ հայերէն գիտէ եւ առանձին չէ. Ումիթ Քուրթ եւ Ուկուր Ունկոր՝ այլոց շարքին, հիմնաւոր գործեր կ'արտադրեն այս նիւթին շուրջ: Շրջանի բոլոր ազգութիւններուն կիսած անցեալի փորձառութիւնը եւ էթնիկ սահմանները զանցող համագործակցական ջանքերը պէտք է քաջալերուին՝ աւելի առարկայական պատմութիւն մը գրելու համար:

Նիւթի աղբիւր՝ Հայագիտական Ուսմանց Ծրագիր Միացեալ Թագաւորութիւն

ԳԱՂՏԱԶԵՐԾՈՒԹ ՓԱՏԱԹՂԹԵՐ

Շարունակուած էջ 14-էն

խօսեցի համաձայնագրերի կարեւորութեան մասին, թուարկեցի մեր համար հնարաւոր բացասական հետեւանքները դրանցից հրաժարուելու դէպքում, պնդեցի, որ նման շտապողական որոշումներ կայացնելն անընդունելի է: Ի վերջոյ, առաջարկեցի մէկ շաբաթով յետաձգել քննարկումը՝ պարտաւորեցնելով ԱԳՆ-ին ներկայացնել նկատառումները գրաւոր տեսքով: Խրուչչովը ստիպուած ընդունեց դա: Միւսները պարզապէս լռեցին: Սակայն, երբ դուրս էինք գալիս, Բուլգանինը ինձ շնջաց. «Դու արդեն յաղթել ես»:

Դրանից յետոյ Խրուչչովը սկսեց ինձ համոզել մեկնել ԱՄՆ, որպէսզի մեղմացնեմ իր իսկ ճառի


արդիւնքում ի յայտ եկած առճակատումը: Ես կտրականապէս առարկեցի. «Սկսել ես՝ ինքդ էլ գնա: Իմիջիպէտ, ինձ ոչ ոք չի հրաւիրել այնտեղ»: «Ոչ, ես չեմ կարող: Ես երկրի առաջին դէմքն եմ: Մեկնի՛ր որպէս դեսպան Մենչիկովի անձնակազմի հիւր: Չէ՞ որ բոլորը գիտեն, որ նա երկար ժամանակ եղել է քո տեղակալը արտաքին առևտրի նախարարութիւնում: Վերցրու հետդ կրտսեր որդուդ, որպէսզի ընդգծես այցի անձնակազմ բնոյթը: Իսկ նա կ'աշխատի որպէս քո անձնակազմ քարտուղար»: Մի խօսքով, ստիպուած էի մեկնել նոր 1959 թուականի առաջին իսկ օրերին»:

Նախագծի գործընկերն է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերութիւնը՝


Jim McDonnell
LOS ANGELES COUNTY SHERIFF'S DEPARTMENT

Special Bulletin


MISSING JUVENILE



ANDRESSIAN, ARAMAZD JR
Male, 5 years old, 55 lbs
Brown hair and brown eyes



Actual Vehicle
2004 Gray BMW 4 Door CA/5FIL646



ANDRESSIAN, ARAMAZD SR.
Male, 34 years old
5'3", 152 lbs, brown hair and blue eyes
Father of missing juvenile

Detectives from the Los Angeles County Sheriff's Department are seeking assistance in locating the above missing juvenile.

The missing juvenile, Aramazd Andressian Jr, was last seen on the evening of Thursday, April 20, 2017, when he was in the custody of his father, Aramazd Andressian Sr. The father was driving a 2004 Gray BMW 4 door CA/5FIL646 (pictured above). The father was initially detained and has been released from police custody, but the whereabouts of the juvenile are unknown.

Any information on the whereabouts of the missing juvenile, please contact Sheriff's Homicide Bureau.

Any questions or information contact LASD Homicide Bureau.
ATTN: Det. L. Aguilera or Det. M. Boisvert (323) 890-5500
LASD Homicide Bureau 1 Cupania Circle, Monterey Park 91755
Sheriff's File # 017-00040-3199-402
CRIME STOPPERS
On Line: <http://lacrimestoppers.org> - phone: 800-222-TIPS (8477) - or smartphone: Download "P3 Tips" mobile app for free or "P3 Mobile" for the hearing impaired

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----

Tel: ----- Email: -----

Փերմիաքովը Պատիժը

Շարունակուած էջ 7-էն

ՀՀ քրէական օրէնսգիրքի 175-րդ յօդուածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կէտերով եւ ՀՀ քրէական օրէնսգիրքի 34-329-րդ յօդուածի 1-ին մասով նախատեսուած յանցագործութիւններու կատարման համար եւ դատապարտուած է ցմահ ազատազրկման:

Աւելի վաղ, Ռուսաստանի Դաշնութեան ներպետական օրէնսդրութեամբ՝ զէնքով ռուսական ռազմապագայի տեղակայման տարածքէն դասալքութիւն կատարելու, հրաձգային զէնք, զինամթերք յափշտակելու եւ ապօրինի կրելու համար Վ. Փէրմիակովը 12.08.2015թ. Գիւմրիի 102-րդ ռազմապագայի տարածքին գտնուող ռուսաստանեան կայազօրային դատարանի կողմէ դատապարտուած է 10 տարի ազատազրկման:

Այս առումով պէտք է նշել, որ «ՀՀ եւ ՌԴ միջեւ ՀՀ տարածքում ռուսական ռազմապագայի գտնուելու հետ կապուած իրաւասութեան եւ իրաւական փոխօգնութեան հարցերով» 29.08.1997թ. համաձայնագրով յստակ սահմանուած է զինծառայողի կողմէ յանցագործութիւն կատարելու պարագային պատասխանատուութեան ենթարկող պետութիւնը եւ քրէական հետապնդման կարգը: Այդ համաձայնագրի 4-րդ յօդուածի համաձայն ռուսական ռազմապագայի կազմի մէջ մտնող անձանց կողմէ ՀՀ տարածքին կատարուած յանցագործութիւններու պարա-

զային անոնց նկատմամբ կը կիրառուի ՀՀ օրէնսդրութիւնը եւ կը գործեն ՀՀ իրաւասութեամբ մարմինները, իսկ նոյն համաձայնագրի 5-րդ յօդուածով ալ սահմանուած է, որ ռուսական ռազմապագայի կազմին մէջ մտնող անձանց կողմէ կատարուած զինուորական յանցագործութիւններու գործերով կը կիրառուի Ռուսաստանի Դաշնութեան օրէնսդրութիւնը, կը գործեն անոր իրաւասութեամբ մարմինները:

Այսպիսով, առկայ էր իրաւասութիւններու երկակիութիւն, որով եւ պայմանաւորուած էին տուեալ անձի կալանքի եւ պատիժը կրելու ապահովման առանձնաշարժութիւնները:

Հաշուի առնելով առկայ իրողութիւնները եւ նպատակ հետապնդելով ապահովել ՀՀ դատարանի կայացուցած դատավճիռի կատարումը? ՀՀ եւ ՌԴ իրաւասութեամբ մարմիններու միջեւ կայացած են քննարկումներ՝ «Պատժի յետագայ կրման համար անգտնազրկման դատապարտուածներուն փոխանցելու մասին» 1998թ. Մոսկուայի պայմանագրութեան ծիրէն ներս խնդիրը լուծելու համար:

Վ. Փէրմիաքովի պատիժի կատարումը ապահովելու նպատակով նշուած պայմանագրի ծիրէն ներս նախատեսուած յետագայ իրաւական գործընթացներու վերաբերեալ ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը հանրութեան կը տեղեկացնէ յաւելեալ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇԱՐԱԹ» ԹՈՎԻՈՅՈՒՄ



Շարունակուած էջ 16-էն

Մայիսի 12-ին տեղի ունեցաւ «Հայկական ասեղնագործութիւն» խորագրով սեմինար, ինչպէս նաեւ «Քանոն+կոտո» համերգ, որին հայկական եւ ճափոնական երաժշտական կատարումներով հանդէս եկան քանոնահար Մերի Մուսիեանը եւ կոտոիստ Ջունկո Իշիւատան: Միջոցառմանը ներկայ էին մեծ թուով

հանդիսատեսներ՝ դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներ, երաժշտասէրներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Մայիսի 13-ին տեղի ունեցաւ «Հայկական գինիներ» միջոցառումը, որի ընթացքում մասնակիցները հնարաւորութիւն ունեցան ճաշակելու հայկական արտադրութեան տարատեսակ գինիներ եւ հայկական խորտիկներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 8-էն

նելով բարձր դասարանների աշակերտներին, մանկավարժներին, նշել է, որ նման միջոցառումները մատաղ սերնդի կրթական դաստիարակութեան հարցում կարեւոր տեղ են զբաղեցնում: Մեր մշակութային ժառանգութեան ճանաչումը, դրանց նկատմամբ հո-

գատար վերաբերմունքը բոլորիս պարտքն է, ասել է նա, յաւելելով, որ ՊՈԱԿ-ը նախատեսում է նման միջոցառումներ անցկացնել նաեւ միւս մարզերի դպրոցներում:

ՊՈԱԿ-ի մշակութային արժէքների հանրահռչակման, օգտագործման եւ մարքեթինգի բաժնի աւագ գիտաշխատող Սերոբ

ՌՈՒԲԷՆ ԱԻՇԱՐԵԱՆԻ «ON THE RECORDS»

Շարունակուած էջ 13-էն

Թեան շնորհաւորեց հեղինակը եւ երկու հատորները համարեց յաւելեալ արժէք մը Հայկազեան Համալսարանի հրատարակած գիրքերու ցանկին վրայ, ինչպէս նաեւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Խորհրդարանի նախագահին՝ իր հովանաւորութիւնը շնորհելուն համար այս ձեռնարկին: Դոկտ. Հայտնութեան յայտնեց, որ գիրքին նիւթը թէեւ լիբանանեան Խորհրդարանի հայ երեսփոխաններն են 1922-էն 2017-ի միջեւ, սակայն քաղուած դասերը բոլոր լիբանանցիներուն համար են: Դոկտ. Հայտնութեան աւելցուց, որ Խորհրդարանի շէնքին ճարտարապետութիւնը եւ «Նրժմէ»-ի հրատարակի ժամացոյցին ճարտարապետութիւնը հայ ճարտարապետ Մարտիրոս

Ալթունեանի գործերն են եւ մեծ արժէք կը ներկայացնեն լիբանանեան ճարտարապետութեան մէջ: Ապա Դոկտ. Հայտնութեան հեղինակը պատուեց Համալսարանին մետալով, որպէս գնահատանք իր կատարած աշխատանքին համար:

Ձեռնարկին յայտագիրը վառեց Հայկազեան Համալսարանի ընդհանուր յարաբերութեանց վարիչ Տիկ. Միրա Եարտրմեանը, որ խօսեցաւ Հայկազեան Համալսարանի հրատարակչատան մասին եւ թուեց բոլոր այն կարեւոր երկերը, որոնք հրատարակուած են անոր կողմէ, ինչպէս նաեւ պատասխի վրայ ցուցադրուեցան գիրքին մէջ լույս տեսած վաւերագրութիւնները: Ապա հեղինակը ստորագրեց գիրքերը բոլոր փափաքողներուն համար: Արաբերենէ թարգմ.՝ Վ. Թ.

ՍԱՐԳԻՍ ՆԱԳԱՐԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

է, երբ Տէր եւ Տիկ. Սարգիս Նաճարեան անձամբ հանդիպում ունեցած էին քահանայապետին հետ՝ Վատիկանի մէջ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած հոգեհանգստեան արարողութեան շրջագիծէն ներս իրենց հանդիպման ընթացքին, որմէ ոգեշնչուելով՝ Սարգիս Նաճարեան խորագրած է այս գիրքը:

Հ.Կ.Հ.Մ.-ական տուտուկահար Գէորգ Քէշիշեանի կողմէ երաժշտական ներկայացումէ ետք, խումբ մը հոգեւորականներու կողմէ, գլխաւորութեամբ հայր Սեպուհ Վրդ. Կարապետեանի, տեղի ունեցաւ գիրքին պաշտօնական օժտումը եւ գինեձօնը:

Գինեձօնէն ետք, գիրքին հեղինակը՝ Սարգիս Նաճարեան, իր սրտի խօսքին մէջ նկատել տուաւ, որ այս յարգանքի երեկոն ինքնին պարտաւորեցնող է, որ ինք շարունակէ իր աշխատանքը եւ հրատարակէ յաւելեալ գրքոյկներ, նուիրուած այս անձնաւորութեան: Ըստ Նաճարեանի, այս գրքոյկը փորձ մըն է մեղմացնելու այն թերացումը կամ բացը, զոր հայ մամուլը դրսեւորած է Ֆրանչիսկոս պապին նկատմամբ: Աւելին, հայ մամուլի

եւ յատկապէս հայրենի մամուլին կողմէ Պապին նկատմամբ բաւարար տեղեկացուածութիւն չունենալն է որ զայն մղած է նախաձեռնելու այս գիրքի հրատարակման աշխատանքներուն: Նաճարեան ներկաները ուրախացուց նաեւ առկայ տեղով, որ գիրքին երկրորդ հատուածը արդէն իսկ պատրաստ է եւ շուտով կը յանձնուի հրատարակման:

Յայտագրի պաշտօնական բաժինը իր աւարտին հասաւ արհիպատիւ Տէր Գէորգ եպս. Ասատուրեանի խօսքով, որ, գնահատելով Սարգիս Նաճարեանին ունեցած ներդրումը՝ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ քարոզչական եւ հրատարակչական մարզին մէջ, գնահատեց անոր նախաձեռնութիւնը, սերունդներու յիշողութեան յանձնելու համայն հայ ժողովուրդին համար պատմական կարեւորութիւն ներկայացնող ժամանակաշրջանի մը իր տպաւորութիւններն ու յուշերը, որոնք ականատեսի վկայութեամբ փոխանցուած են եւ մարմնաւորուած այս գրքոյկով:

Աւարտին, հեղինակ Սարգիս Նաճարեան Մեսրոպեան վարժարանի շրջափակին մէջ կատարեց գիրքի մակագրումը:

Յունանեանը համառօտ ներկայացրել է ՊՈԱԿ-ի մասնաճիւղ արգելոց-թանգարանները, խօսել դրանց տարածքում գտնուող պատմական յուշարձանների նշանակութեան մասին:

Լուսապատկերային ցուցադրութեամբ դպրոցականներին բաւականին հետաքրքիր տեղեկութիւններ է փոխանցել ՊՈԱԿ-ի գիտնական-քարտուղար Աշոտ Փրլիպոսեանը: Միջնադարեան հայկական եկեղեցիները նա ներկայացրել է փաստագրական տուեալներով, խօսել դրանց ճարտարապետական արժէքի, պատմական նշանակութեան մասին, մէջբերել աւանդապատմւմներ:

ՊՄՊ Կոտայքի մարզային ծառայութեան պետ Կամօ Յակոբեանն էլ անդրադարձել է մարզի յուշարձանների պահպանութեանը,

մարզային ծառայութեան աշխատանքին, յուշարձանների նկատմամբ կատարուող իրաւախախտումներին: Նրա խօսքով այս տարուայ ընթացքում նման 5 ղէպք է արձանագրուել:

Ամփոփելով միջոցառումը կրթօճախի տնօրէն Սվետլանա Յովհաննիսեանը շնորհակալութիւն է յայտնել, որ հենց թիւ 2 դպրոցն է ընտրուել այս միջոցառման համար: Նա համոզմունք է յայտնել, որ կրթամշակութային համատեղ ծրագրեր առաջիկայում եւս կիրականացուեն:

Նշենք, որ Մայիսի 28-ին նախատեսուած է ՊՄՊ Կոտայքի մարզային ծառայութեան աշխատակիցներին, կրթօճախի աշակերտներին, մանկավարժների մասնակցութեամբ արշաւ կազմակերպել Հատիսի գագաթ:

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ

«Մասիս»-ի հաւատաւոր ընթերցողներէն մի ոմն կը շնորհաւորէ թերթի բովանդակութիւնը: Առ այդ 100 տողար կը նուիրէ «Մասիս»-ի բարգաւաճման ֆոնտին:

Լոնտոնի «Չելսին» հռչակուեց Անգլիայի Ախոյեան «Տոտենհեմը» Դարձաւ Փոխ-Ախոյեան



Լոնտոնի «Չելսին» իտալացի Անտոնիո Կոնտեի գլխավորութեամբ հռչակուեց Անգլիայի ախոյեան:

Պրեմիեր լիգայի առաջնութեան 37-րդ տուրի խաղում առաջատարը հիւրընկալուեց «Վեստ Բրոմվիչին» եւ յաղթեց նուազագոյն հաշուով: Վերջին ընդհանրապէս կոլի հեղինակ դարձաւ բելգիացի յարձակող Միշի Բատշուային:

«Չելսին» վաստակել է 87 միաւոր եւ 10 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող Լոնտոնի «Տոտենհեմի» նկատմամբ: Երկու թիմերին էլ ընթացիկ առաջնութիւնում մնացել է անցկացնել երեք հանդիպում: «Չելսին» 6-րդ անգամ նուաճեց տիտղոսը:

Առաջնութեան 37-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» Լոնտոնում 1:2 հաշուով պարտուեց «Տոտենհեմին»՝ կրելով երկրորդ անընդմէջ պարտութիւնը:

Լոնտոնեան ակումբը հաշիւը բացեց խաղի մեկնարկում, իսկ երկրորդ խաղակէսի սկզբնամասում նաեւ կրկնապատկեց այն: 61-րդ րոպէին «Մանչեսթեր Եունայթեդը» կազմում փոխարինման դուրս եկաւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, իսկ 10 րոպէ անց հիւրերը կրճատեցին հաշիւը, սակայն աւելին անել չյաջողուեց:

Այս յաղթանակից յետոյ «Տոտենհեմը» վաստակեց 80 միաւոր եւ ապահովեց երկրորդ տեղը, իսկ մանչեսթերցիները 65 միաւորով մնացին 6-րդ տեղում: Այս տուրում Անգլիայի ախոյեանի տիտղոսն ապահովել էր 87 միաւոր վաստակած «Չելսին»:

«Տոտենհեմն» Անգլիայի փոխչեմպիոն դարձել է նաեւ 1921/22, 1951/52, 1956/57, 1962/63 մրցաշրջաններում: 1950/51 եւ 1960/61 մրցաշրջաններում լոնտոնեան ակումբը նուաճել է Անգլիայի ախոյեանի տիտղոսը:

Սա «Տոտենհեմի» վերջին հանդիպումն էր «Ուայթ Հարթ Լեյն» ստադիոնում: Յաջորդ մրցաշրջանում թիմը տնային խաղերը կ'անցկացնի «Ուեմբլիում», իսկ 2018-ին կը տեղափոխուի նոր ստադիոն:

«Ֆեյենորդը» 18 Տարուայ Դադարից Յետոյ Դարձաւ Հոլանտիայի Ախոյեան



Ռոտտերդամի «Ֆեյենորդը» պատմութեան մէջ 15-րդ անգամ հռչակուեց ֆուտպոլի Հոլանտիայի ախոյեան: Հոլանտիայի առաջնութեան վերջին՝ 34-րդ տուրում «Ֆեյենորդը» տանը 3:1 հաշուով յաղթեց «Հերակլեսին» եւ 82 միաւորով գրաւեց առաջին տեղ: Դաշտի տէրերի կազմում հեթ-տրիկի հեղինակ դարձաւ «Լիվերպուլի» եւ Հոլանտիայի հաւաքականի նախկին կիսապաշտպան, 36-ամյա Դիրկ Կալտը, որը կոլերից մէկը խփեց 11 մետրանոցից:

Ամստերդամի «Այաքսը» եւս յաղթանակ տարաւ վերջին տուրում եւ 81 միաւորով գրաւեց երկրորդ տեղը, իսկ լաւագոյն եռյակը եզրափակեց «ՊՍՎ Էյնդհովենը»՝ 76 միաւորով:

«Ֆեյենորդը» նախորդ անգամ Հոլանտիայի ախոյեան դարձել էր 18 տարի առաջ (1998/99 մրցաշրջանում):

2015 թրուականից «Ֆեյենորդը» գլխավորում է «Բարսելոնայի» եւ Հոլանտիայի հաւաքականի նախկին պաշտպան Զովանի վան Բրոնկհորստը:

Մխիթարեանը Հայաստանի Հաւաքականի Առաջին Ֆուտպոլիստն է, Որը Նուաճում է Եւրագաւաթների Եզրափակիչի Ուղեգիր

Հ ե ն ը ի խ Մ խ ի թ ա ռ ե ա ն ը , ա ն գ լ ի ա կ ա ն «Մանչեսթեր Եունայթեդի» կազմում նուաճելով Եւրոպայի լիգայի եզրափակիչի ուղեգիր, դարձել է Հայաստանի հաւաքականի առաջին ֆուտպոլիստը, որը հնարաւորութիւն է ստանում հանդէս գալ Եւրագաւաթների մրցաշարի եզրափակիչում:



Կիսաեզրափակիչում անգլիական ակումբը 2 խաղերի արդիւնքում յաղթեց Վիգորի «Սելտային» (1:0, 1:1): Մայիսի 24-ին Ստոքհոլմի «Ֆրենդս Արենա» ստադիոնում կայանալիք եզրափակիչում «Մանչեսթեր Եունայթեդի» մրցակիցը կը լինի Ամստերդամի «Այաքսը»:

Նախկինում եւրագաւաթների եզրափակիչում հանդէս եկել են հայկական արմատներ ունեցող 2 ֆուտպոլիստներ՝ Ֆրանսայի հաւաքականի նախկին խաղացողներ Եուրի Զորիակեֆն ու Ալեն Բոգոսեանը: Զորիակեֆը 1996-ին Գաւաթակիրների Գաւաթի եզրափակիչ է հասել եւ յաղթել ՊՍժ-ի հետ, իսկ «Ինտերի» կազմում 1998-ին նուաճել է Ուեմբլի գաւաթը: Ալեն Բոգոսեանն իտալական «Պարմայի» հետ Ուեմբլի գաւաթակիր է դարձել 1999-ին:

Յիշեցնենք, որ Եւրոպայի լիգայի յաղթողը նուաճում է Ախոյեանների լիգայի խմբային փուլի ուղեգիր:

«Բարսելոնան» Ու «Ռեալը» Յաղթեցին խոշոր Հաշուով

Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան նախավերջին տուրը յաղթական ստացուեց ախոյեանութեան համար պայքարող «Բարսելոնայի» ու «Ռեալի» համար: 37-րդ տուրում մադրիդցիները տանը 4:1 հաշուով յաղթեցին «Սելտային», իսկ կատալոնացիները նոյն հաշուով արտագնայ յաղթանակ տարան «Լաս Պալմասի» նկատմամբ: «Բարսելոնայից» հեթ-տրիկի ու կոլային փոխանցման հեղինակ դարձաւ պրագիլացի յարձակող Նեյմարը: «Ռեալից» դուբլ ձեւակերպեց պորտուգալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն, որն իսպանական ակումբի կազմում կոլերի քանակը հասցրեց 401-ի:

«Բարսելոնան» ու «Ռեալը» վաստակեցին 85-ական միաւոր, սակայն Արքայական ակումբը մէկ հանդիպում պակաս է անցկացրել: Մայիսի 21-ին կայանալիք վերջին տուրում կատալոնական ակումբը կ'ընդունի «Էյբարին», իսկ մադրիդցիները կը հիւրընկալուեն «Մալյագային»: «Ռեալը» «Սելտայի» հետ յետաձգուած հանդիպումը կանցկացնի Մայիսի 17-ին Վիգորում:

Մադրիդի «Աթլետիկոն» 1:1 հաշուով աւարտեց «Բետիսի» հետ արտագնայ հանդիպումը եւ, վաստակելով 75 միաւոր, ապահովեց երրորդ տեղն ու Ախոյեանների լիգայի խմբային փուլի ուղեգիր: «Սելտային» 69 միաւորով չորրորդն է եւ ապահովեց Ախոյեանների լիգայի որակաւորման փուլին մասնակցելու իրաւունք:

12 Ակումբներ Ապահովել են Ախոյեանների Լիգայի Խմբային Փուլի Ուղեգիր

Ախոյեանների լիգայի յաջորդ մրցաշարի խմբային փուլում Մայիսի 14-ի դրութեամբ իրենց տեղն ապահովել են 12 թիմեր:

Սպանիայից Ախոյեանների լիգայի ուղեգիր են նուաճել «Բարսելոնան» ու Մադրիդի «Ռեալը», Գերմանիայից՝ Մյունխենի «Բաւարիան» ու «Լայպցիգը», Անգլիայից՝ Լոնտոնի «Չելսին» ու «Տոտենհեմը», Պորտուգալիայից՝ Պորտոնոն ու «Բենֆիկան», Ֆրանսայից՝ Մոնակոն, Ռուսաստանից՝ Մոսկուայի «Սպարտակը», Ուկրաինայից՝ Դոնեցկի «Շախտյորը», Շուեյցարիայից՝ «Բազելը»:

Միշա Ալոյեանը Յաղթանակով է Մեկնարկել Պրոֆեսիոնալ Ռինգում

Ռուսաստանցի բռնցքամարտիկ Միշա Ալոյեանը պրոֆեսիոնալ ռինգում նորամուտը նշել է յաղթանակով:

Կեմերովոյում կայացած 10 ռաունդանոց մենամարտում 2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերի պրոնգէ մետալակիրը մրցավարների միաձայն որոշմամբ յաղթել է Նիկարագուան ներկայացնող Յադեր Կարդոսին եւ նուաճել WBA-ի մայրցամաքային գոտին:

«Բոլորդ տեսաք, որ հեշտ մենամարտ էի, քանի որ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկները նորամուտը նշում են 4 ռաունդանոց մենամարտում: Իսկ ես միանգամից սկսեցի 10 ռաունդանոց մենամարտով: Առաջիկայում կը փորձեմ ձեզ ուրախացնել աւելի գեղեցիկ մարտերով», - մենամարտից յետոյ ասել է Միշա Ալոյեանը: